Ֆ. ՕՐԲԵԼԻ

ԱՆՒՈՅ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

Պատմութիւն, Այժմեան վիճակ, Պեղումներ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Վրաց Եպիփան կաթուղիկոսի առաքելութիւնը եւ Աբու-Սայիդի հրովարտակը կարեւոր ծանօթութիւններով

Թարգմանեց ռուսերէնից և կազմեց

Միքայեան Ս. Էջմիածնի

ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Առաստպուած Արարատ ամսագրից)

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Էլեքտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1911

9(47.925)
О-63

Յ. ՕՐԲԵԼԻ

ԱՆՒՈՅ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

Պատմուրիւն, Այժմեան վիճակ, Պեղումներ

Թարգմանեց ռուսերէնից

Միքայեան Ս. Էջմիածնի

ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Արտատպուած Արարատ ամսագրից)

1004
1267
ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

Վ. Ա. Դ. Ա. Ր Շ Ա. Պ Ա. Տ
Ելեքտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1911

І. ОРБЕЛИ

РАЗВАЛИНЫ АНИ

Исторія, Современное состояніе. Раскопки.



С.-Петербургъ
1911

23470

ԱՆԻՈՅ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ*

Անին Կովկասում, Կարսի նահանգի Կարս գաւառում մի աւերակ է Արփաչայ գետի աջ ափին, որ հոսում է Արաքս գետը։ Արփաչայը հնումն Ախուրեան էր կոչւում։ Անին գտնւում է Երևանեան երկաթուղու Անի կայարանից 6—8 վերստ և Ալէքսանդրապոլից 35—40 վերստ հեռաւորութեան վերայ։

Սոյն տեսութեան նպատակն է տալ ընդհանուր գաղափար Անիի արտաքին պատմութեան, այժմեան վիճակի և պեղումների հետեւանքի մասինք։

---

* Սոյն գրքուկին մենք յաւելացրինք վրաց Եպիփան կաթուղիկոսի վրացերէն և Աբու-Սայիդի պարսկերէն արձանագրութիւնները, կցելով մի քանի կարեւոր ծանօթութիւններ։ Հայ Թարգմ.

I.

Անին Հայաստանի մայրաքաղաքն է։ Երբեմն ծաղկած քաղաքի անապատ աւերակները սովորաբար այդպէս են յայտնի։ Այդ յորջորջումն թէև հանրացած և ամենից ընդունուածն է, սակայն ամենևին չէ արտայայտում այն աչքի ընկնող դերը, որը մեր քաղաքը խաղացել է Հայաստանի և բոլոր Կովկասի պատմական կեանքում։

Անին երբէք ամբողջ Հայաստանի մայրաքաղաքը չէ եղել։ Բայց դրանից, այնպիսի կենտրոններ, որպիսին Անին է, զանազան ժամանակաշրջաններում մի քանի հատ են եղել։ Նրանց շարքում Անին ամենանորն է և, իբրև մայրաքաղաք՝ ամենակարճօրեայն։ Իւր գոյութեան ամենաերկարատև շրջանում Անին էր ոչ թէ մայրաքաղաք, այլ միայն մեծ վաճառաշահ, արդիւնաբերական և կուլտուրական քաղաք։ Բնակավայր ոչ թէ թագաւորների, որ բուն Հայաստանում այդ ժամանակ չկային, այլ միայն տեղական կառավարիչների, և այն էլ՝ մեծ մասամբ օտարերկրացի։

Անիի պատմութիւնը ձևականապէս կարելի է երկու շրջան բաժանել—տեղական հայ իշխողների տերապետութեան շրջան, և օտարերկրեայ իշխողների շրջան։ Բայց այդ բաժանումն միայն արտաքին է։ Իսկապէս՝ Անին օտարերկրացիների ձեռքն անցնելով՝ իւր ներքին կեանքում քիչ փոխուեց։ Պէտք է մի կողմ թողնել հնացած և սխալ

վարկումն թէ Անիի բարգաւաճումն Բագրատունեաց շրջանումն է եղել, թէ քաղաքի յետնագոյն կեանքը եղել է նրա մահացումն։ Անիի հայ հարստութեան անկումն ամենևին Անիում առաջ չէ բերել տեղական կուլտուրայի անկում։ Այն եղել է փոխանցման, և այն էլ ոչ խիստ փոխանցման, մի վայրկեան. որովհետև Անիի շարունակող կեանքը եղել է նրա նախանցեալ շրջանի կենսակրթութեան զարգացումն։ Չնայելով օտարերկրեայ տիրապետութեան, ամենևին չէ փոխուել քաղաքի տեղական իսկական պատկերը, որը ամբողջութեամբ իւրացրել էր հարևան ժողովուրդների քաղաքակրթող ստեղծագործութեան հարուստ հետևանքները։ Անիի բարգաւաճումն այն ժամանակին է վերաբերում, երբ Ռուբենեան հարստութիւնից նոր առաջ եկած հայ թագաւորները նստում էին հեռաւոր Կիլիկիայում։

Հին Հայաստանի միւս մեծ քաղաքների համեմատութեամբ Անին ունի առանձին արժէք և առանձին նշանակութիւն։ Նա լաւ պահպանուած լինելով, լաւ էլ յայտնի է մեզ պատմութեամբ։ Խորը ուսումնասիրելով Անին, նրա յիշատակարանները և նրա պատմութիւնը՝ շատ հեշտ է անցնել հին Հայաստանի կեանքին, շատ հեշտ է նրա պատմութիւնը հասկանալ։ Էլ չխօսելով բազմաթիւ արձանագրութիւնների մասին, իրական բազմազան գիւտերը, և անեցիների բնակարանների, տնային սարք ու կարգի հետ ծանօթութիւնը մեծ լոյս են սփռում կեանքի այն կողմի վերայ,

որի մասին տեղական հին պատմիչները խորին լռութիւն են պահում։ Հայաստանի կեանքը բնորոշելու համար այսպիսի մեծ նշանակութիւն ունենալով՝ Անին մերձաւոր արևելքի պատմութեան համար էլ ներկայացնում է մեծ հետաքրքրութիւն, մանաւանդ վճռական փոփոխութիւններով լի ԺԱ—ԺԴ դարերի շրջանում։ Եւ ի դէպ, այդ կարևոր շրջանը, համեմատելով ուրիշ վայրկեանների հետ՝ Անիում աւելի կատարեալ է հանդիսանում։ Անին իւր աւերակներում շատ լաւ է պահպանել միջնադարեան մեծ քաղաքի կերպարանքը. այժմ նա հանդիսանում է Առաջաւոր-Ասիայի քաղաքներից միակը, որ այնպէս վաղ մեռնելով՝ ամենևին չէ աղաւաղուել նոր կեանքի պայմանների ազդեցութեան տակ։ Վերջապէս Անիի յիշատակարանները բնորոշելով մի կարգ ժամանակաշրջանների հայկական գեղարուեստի զարգացումն՝ պարզ և բարդ գեղարուեստի բոլոր տեսակների պատմութեան համար շատ գնահատելի են. չէին եղել դրանք, ոչ միայն Հայաստանի, այլ և Առաջաւոր—Ասիայի և Բիւզանդիայի գեղարուեստի շատ գծեր գիտութեան համար անհասկանալի մնացած կը լինէին։

II.

Յայտնի չէ թէ երբ է հիմնուել Անին։ Միայն անկասկած է, որ նրա սկզբնաւորութիւնը խորին հնութեան է վերաբերում։ Այս մասին վկայում է ամենից առաջ նրա Անի անունը։ Պէտք է մի կողմ թողնել այն բացատրութիւնը, որ Անի կոչումն կապւում է Անահիտ աստուածուհու անունի հետ, որի բագինը գտնւում էր այդտեղ։ Անի բառը իւր ձևով վերաբերում է Հայաստանի, Վրաստանի և մերձաւոր երկրների կեանքի շատ աւելի հնագոյն կեանքի դարաշրջանին։ Հնդ-Եւրոպական ծագումից չէ այն և պէտք է մեկնել որ և է մի ժողովրդի անուան հետ կապելով։

Այն ժամանակի միակ իրական վկան է մի բաւական ընդարձակ գերեզմանոց, որ իւր մէջ բովանդակում է քաղաքի հնագոյն բնակիչների խանձուած, կամ փշրտուած ու կոտրտուած ոսկրները։ Քաղաքը այդ ժամանակ ի հարկէ, կարող էր մի աւան լինել։ Այդ գերեզմանոցը քաղաքից մի վերստ հեռու՝ թուրք Անի գիւղի կալերումն է գտնւում։ Այդտեղ գտնուած առարկաները պատկանում են Կովկասի նախապատմական հնութիւնների տիպին, հնութիւնների, որոնց կարելի է համարել Քրիստոսից առաջ՝ Ը—է դարերի գործ։ Այդ ժամանակը Անիի կեանքի մասին մեզ յայտնի հնագոյն թուականն է։ Այդ շրջանից ուրիշ յիշատակարաններ առ այժմ չեն գտնուել ոչ

Անիում, ոչ նրա մերձակայ շրջակայքում։

Անիի կեանքի մեզ յայտնի հետևեալ վայրկեանն է Ե. դարը Քրիստոսի ծննդից յետոյ, երբ Անին պատմութեան մէջ յիշատակւում է մի քանի անգամ որպէս ամրոց։ Նա այդ ժամանակ գտնւում էր հայ Կամսարական հզօր իշխանների տիրապետութեան մէջ, Կամսարականների, որոնք ամուր նստել էին այդ տեղերում, և զինքն Անին, բայց ոչ զէնքի զօրութեան։

Կամսարականները շատ յաջող տեղ էին ընտրել ամրոց շինելու։ Եռանկիւնիի բարձրութիւնը, որի վերայ շինուած է Անին, պաշտպանուած է Ախուրեան գետի և Անի գետակի անդնդախոր անմատչելի ձորերով. երրորդ կողմից մի բաւական նեղ տարածութիւն է, և հեշտ էր նրան լաւ ամրացնել։ Կամսարականները թողել են մեզ ամրոցի մի հաստատուն պարիսպ, որը ի յայտ է եկել պեղումներով. պարիսպը շարուած է կոշտ, վայրի ահագին սալաքարերով, որոնք իրար միացած են երկաթեայ կապերով (скоба)։ Այդ միևնոյն ժամանակ Անին, գտնուելով առևտրական կարևոր ճանապարհներից մէկի վերայ, ռազմական մի գերազանց վայր էր հանդիսանում։ Կամսարականների օրով Անին միայն բերդ էր. յայտնի էլ չէ, թէ եղել է այն, նոյն իսկ կարճ ժամանակով, Կամսարական զօրաւոր ցեղի մի քանի անդամների բնակավայր (резиденція)։

Անին այն ժամանակ քաղաքի նշանակութիւն ստացաւ, երբ անցաւ եկրւոր (հաւանօրէն՝ Լա-

գերի երկրից*), բայց շինարարական ձիրքով առատօրէն օժտուած, Բագրատունիների ձեռքը։ Զարմանալի է, որ այս բազմանդամ, եռանդոտ, անձանձրոյթ, ընդարձակ ցեղի անդամները, ամենուրեք, ուր և երևում էին, կարողանում էին բաժան բաժան եղած տեղական ոյժերը միացնել և ստեղծում էին մեծ կամ փոքր ամբողջութիւն։ Շիրակի հայ թագաւորութիւնը, որը որպէս թագաւորութիւն, երևան է գալիս Թ. դարում, ամբողջովին Բագրատունիների ջանքի պտուղն է. որոնք է, որ զէնքի ուժով և է, որ գնմամբ այստեղ մեծացրին իրանց տիրապետութիւնը։ Գնուած գաւառների շարքում Կամսարականներից նրանց անցաւ այն վայրն էլ, ուր գտնւում էր Անին։

Սկզբում Հայոց Բագրատունեան թագաւորութիւնը մէկն էր հաւասարազօր իշխանութիւններից՝ որոնցից մի քանիսը նրանց հետ մաքառելու բաւական ոյժ ունէին։ Այդ իշխանութիւններից մի քանիսին թէև վիճակուեց մինչև անգամ Շիրակի թագաւորութիւնից էլ երկար գոյութիւն ունենալ, բայց միայն Շիրակին յաջողուեց իւր շուրջը խմբել մնացած բոլոր իշխանութիւնները.

---

*) Հայ պատմութեան տուեալները Բագրատունիների ծագումն հրէական են համարում և նրանց գաղթը Հայաստան՝ շատ հին. նրանք հայ Պարթև և Արշակունի թագաւորների թագադիր ասպետի տիտղոսն էին կրում, և այս տիտղոսով նրանք երևան են գալիս հայ պատմութեան մէջ. Ք. ծ. աւելի քան մի դար առաջ։
Հայ Թարգ.

միայն Շիրակի մայրաքաղաքին յաջողուեց Հայաստանի մեծ մասի գաղափարական կենտրոնը դառնալ։

Անին միանգամից չդառձաւ Բագրատունիների բնակավայր. Բագարանից (որի գոյութիւնը Անիի պէս վերաբերում է խորին հնութեան), ուր առաջին անգամ հաստատուել էին, փոխադրուեցին Բագրատունիները Երազգաւոր կամ Շիրակաւան, այժմ Շորագեալ գիւղ։ Բայց ոչ Բագարանը և ոչ Շիրակաւանը իրանց նշանակութեամբ չէին կարող հաւասարուել Անիին, որը նրանց ծաղկման ժամանակ միայն բերդ էր,—ամուր կռուան և վստահելի ապաստանարան վտանգի դէպքում։

Առաջին Բագրատունին, որ Շիրակի թագաւոր հրատարակուեց՝ էր իշխանաց իշխան Աշոտը, որ հայ զօրքերի հրամանատարն էր։ Այս եղաւ 887 թուին։ Տեղական բոլոր իշխաններից նրան «հայոց թագաւոր» յատկացրած տիտղոսը ճանաչուեց բիւզանդական կայսրից էլ, իսկ խալիֆը իւր փոխանորդի ձեռքով ուղարկեց արքայական թագ։ Կարիք չկայ կանգ առնել նրա կառավարութեան, և նոյնպէս նրա որդու ու յաջորդի (891 թուին) Սմբատ աշխարհակալի թագաւորութեան վերայ, որի օրով երկիրը սկզբում կարծես հանգիստ և բարօրութիւն գտաւ։ Յետոյ, երբ Շիրակի զահը հակուեցաւ ցոյց տուեց դէպի Բիւզանդիա, այս բանը մուսուլման էմիրների հետ բարդութիւններ առաջ բերեց և Սմբատի կորստեան առիթ դարձաւ. մի քանի պատերազմներից յետոյ, որ մղեց փոփոխական բաղդով՝ 914 թուին նա գերի ընկաւ Դուինի էմիրի ձեռքը և փայտի վերայ խաչուեց։

Սմբատի եղբօր որդի Աշոտը, որ իրան թագաւոր հրատարակեց շահանշահ*, այսինքն թագաւորների թագաւոր, տիտղոսով, 921 թուին արտաքսուեց Բիւզանդիայի հովանաւորած օրինական ժառանգ Աշոտ Գ. Երկաթից, որ իւրացրեց իւր նախորդի շահանշահ տիտղոսը։ Սասանեան թագաւորներից ընդօրինակած այս տիտղոսը այդ ժամանակից սկսած պահպանեցին հայ Բագրատունի թագաւորները։

930 թուին Աշոտ Երկաթին փոխանակեց Աբասը, որի թագաւորութիւնը նշանաւոր դարձաւ ոչ միայն հիւսիսային «սարմատացի» հրոսակներին դիմադրելով, այլ և շինարարական խաղաղ բարգաւաճմամբ և ուսումնական աստուածաբանների ու պատմաբան գիտնականների զբաղմունքների զարգացմամբ։ Աբասի օրով երկու վայրեր հռչակ ստացան—Կարսը (ուր նստած էր

*, Կարծում ենք, որ Բագրատունիների աշխարհակալ և շահանշահ տիտղոսները պէտք չէ բառի խկական մտքով հասկանալ, այլ տեղական։ Այդ ժամանակ Հայաստանում մանր իշխանութիւններից մի քանիսը թագաւոր էին կոչւում։ Բագրատունիները. իբրև դրանցից աւելի հզօրը, շահանշահ-թագաւորների թագաւոր-էին անուանւում։

Հայ Թարգմ.

Արասը) և Անին, որոնք նրա մահից յետոյ առանձին թագաւորութիւններ դարձան։

Աշոտ Դ-ը 954 թուին Անիի թագաւոր դառնալով՝ անդամալոյծներին ու աղքատներին ոտք տալու, հիւանդանոցներ, օտարներին ապաստանելու տներ շինելու համար «Ողորմած» կոչուեց։ Սրա վարչութեան ժամանակ Անին առաջին անգամ քաղաքի արտաքին տեսք ստացաւ։ 964 թուին կառուցուեց քաղաքային պարսպի գիծը բազմաթիւ աշտարակներով։ Աշոտի ժամանակին է վերաբերում մի քանի աչքի ընկնող շինութիւնների կառուցումն։ Աշոտ Դ-ի օրով հայ հեռուակազօրքը մտաւ բիւզանդական Յովհաննէս Զմշկիկ կայսրի զօրքերի կազմի մէջ, երբ վերջինս պատերազմում էր Բոլգարների և Ռուսաց Սվեատոսլաւ իշխանի դէմ։

Իւր հօրը 977 թուին յաջորդող Սմբատ Բ-ի կառավարութիւնը Անիում աւելի նշանաւոր հետքեր թողեց։ Նա շինեց քաղաքային պարիսպները, որ աւելի ընդարձակ օղակով են շրջապատում Անին քան Աշոտի պարիսպները։ Այդ ակները ցոյց է տալիս քաղաքի արագ և անշեղ աճեալութիւնը։ Կարսը գրաւելու անյաջող փորձն և վրաց Բագրատ թագաւորի ու Տայոց կիւրապաղատ Դաւթի հետ Աբխազների թագաւորի դէմ պատերազմներին մասնակցութիւնը ազդեցութիւն չունեցան Անիի արտաքին բարօրութեան համար։ Սմբատի յանկարծական մահը (990 թ.), որ հաստատում է երկնային պատիժ նրա ծանր չարագործութիւնների, մայրաքաղաքի դռները բաց արեց Սմբատի եղբայր Գագիկի առաջ, որը մինչև այդ՝ իրաւունք չունէր Անի մտնելու։

Գագիկ Ա.-ի ժամանակ (990—1022 թ.) Անիի թագաւորութիւնը հասաւ ամենածաղկեալ դրութեան։ Իւր ուժին վստահ Գագիկը, որին պատմիչները նկարագրում են որպէս կարող, քաջ, պատերազմասէր և յաջողակ ոք, թոյլ տուեց իրան արհամարհել մինչև անգամ Բիւզանդիայի հզօր կայսր Վասիլ Բ.-ի բարեացակամութիւնը։ Գագիկը կայսրին ընդառաջ չգնաց, երբ նա ճանապարհորդում էր արևելքում, երբ արևելեան միւս տիրողները աճապարում էին նրան երկրպագելու և պատիւ էին համարում ընդունել նրա շնորհած պալատական տիտղոսները։

Գագիկը իրան շահանշահ էր համարում, և դիտէր՝ որ ինքն է հայ երկրի համախմբողն ու միացնողը։ Նրա համար պարզ էր իւր ժամանակով կատարուած Տաշիրքի ընդարձակ նահանգի և Կարթալինիայի մի մասի Անիի թագաւորութեան հետ միացման մեծ նշանակութիւնը։ Նա իրան համարում էր հայերի և վրացիների թագաւոր այնքան՝ որքան վրացական երկրներ էին մտնում նրա պետութեան սահմանի մէջ։

Վասլին ողջունելու դուրս չգալով՝ Գագիկը մի և նոյն ժամանակ արագօրէն և վճռաբար անձնահարեց իւր եղբօրորդի Աբուսահլի բանսարկութիւնները նրա տիրապետութեան մեծ մասը գրաւելով։ Նա արագութեամբ և նոյնպիսի մի-

ջոցներով հնազանդեցրեց իւր միւս եղբօր-Գուրգէնի-որդի Դաւթին, որը պատրաստում էր իրան անկախ հրատարակել։

Չնայելով այն բոլոր պատերազմներին, և թերևս հենց այդ պատերազմների զօրութեամբ, Գագիկը զգալի կերպով թեթևացրեց իւր հպատակների դրութիւնը մի շարք հարկեր և տուրքեր անպահանջ թողնելով։

Գագիկի թագաւորութեան ժամանակ առաջ եկան մի կարգ գիտնականներ, որոնց մէջ էր հայ նշանաւոր պատմաբաններից մէկը-Ստեփան Տարօնացին։ Գագիկի շինարարութեան ամենաւաւ յիշատակարանն է Անիի բոլորակ եկեղեցին (1001 թ.)։ Գագիկի կին Կատրամիդէն աւարտեց Անիի կաթուղիկէն, որը սկսել էր դեռ Սմբատ Բ.-ը։

Գագիկը միակ հայ թագաւորն է, (եթէ չհամարենք և Կիլիկիայի թագաւորները), որից մեզ հասել է քանդակուած պատկերով արձան, որը գտնուեց բոլորակ տաճարի պեղումների մէջ։

Գագիկ Ա.-ի օրով որքան Անիի թագաւորութիւնը բարձրացաւ ու զօրացաւ, այնքան էլ նրա որդի ու յաջորդ պատկասամիտ Յովհաննէս Սմբատի օրով նուաստացաւ ու թուլացաւ։ Յովհաննէս Սմբատի վարչութեան հենց սկզբնաւորութիւնը նշանաւոր եղաւ ներքին պատերազմով իւր Աշոտ եղբօր հետ, որ դադարեց միայն վրաց Գէորգ Ա. թագաւորի օգնութեամբ։ Շուտով նոյն ինքն Գէորգը զրպարտիչների ազդեցութեամբ յանկարծակիի բերեց Սմբատին, գրաւեց նրա երեք բերդերը։ Իսկ Աշոտը, որ այդ ժամանակ էլ իւր տիրապետութեան մէջ շրջապատուած էր հզօր թշնամիներով, ապաւինեց միայն բիւզանդական զօրքերին և այդպէս կարողացաւ պահպանել իւր փոքրիկ ժառանգութիւնը։

Անիի շփոթ վիճակի միասին բաւական վկայում է Պետրոս պատրիարք – կաթուղիկոսի պատմութիւնը, որը Սմբատի հետ տարաձայնութեան պատճառով թողեց իւր աթոռը և փախաւ Անիից, բայց կալանաւորուեց և թագաւորի հրամանով բանտարկուեց։

1042 թուին համարեա միաժամանակ վախճանուեցին Սմբատ ու Աշոտ երկու եղբայրները։ Պատմիչների ասելով՝ անգաւակ Յովհաննէս Սմբատը, որ վայելում էր Բիւզանդիայի շնորհները, իւր թագաւորութիւնը կտակեց Բիւզանդիային։ Այդ ժամանակին թէ Կ. Պոլսում և թէ Հայաստանի ներսում կազմուած էր բիւզանդասէր մի հզօր կուսակցութիւն, որը բաւական ոյժ ունէր Անին գրաւելու համար վճռական քայլ անելու։ Յամենայն դէպս. նա աւելի ուժեղ էր երևում միւս կուսակցութիւններից, որոնց մէկը հայրենի հարստութիւնը (դինաստիա) պաշտպանելու կողմն էր, իսկ միւսը՝ քաղաքը Վրաստանի թագաւորին յանձնելու։ Հենց այդ թուականին բիւզանդական մի հզօր բանակ երևեց Բագրատունիների մայրաքաղաքի պարիսպների տակ. Անիի աջ կողմի ձորի (Ծաղկաձոր) մօտ տեղի ունեցած ճակատամարտում յոյները յաղթուեցին

շնորհիւ ծերունի զօրավար իշխան Վահրամ Պահլաւունու և նրա կուսակցութեան, որը կարողացել էր իւր ժամանակին սերա համախմբուել։ Այդ կուսակցութեանն էր պարսական ընդունակ, բայց չափազանց երիտասարդ Գագիկը, Աշոտի որդին, որ Անիի կաթուղիկէի հրապարակում թագաւոր հրատարակուեց և այդտեղ էլ օծուեց։ Բայց մինչև այդ ժամանակ Անիի Միջնաբերդը գրաւուած էր Բիւզանդական կուսակցութիւնից, որի գլուխ կանգնած էր իշխան Վեստ-Սարգիսը։ Գագիկը նրան այնտեղից դուրս հրապուրեց և կալանաւորեց, բայց ոչ ընդերկար. շուտով նա ինքն ընկաւ որոգայթի մէջ։ Հաւատալով բիւզանդացիների երդմնական խոստմանը, Գագիկ Բ.-ը ուղևորուեց Կ. Պոլիս, բայց այնտեղ բռնի հարկադրուեց հրաժարուել Անիի թագաւորութիւնից, մի աննշան փոխարինութիւն ստանալով։ Յետոյ 1079 թուին սպանուեց նա յոյներից։

1044 թուին յոյն զօրքերը պատերազմով առան Անին, որ ընդ միշտ դադարեց հայ թագաւորութեան մայրաքաղաք լինելուց։ Անին դարձաւ բիւզանդական փոխարքաների ընակավայր (ռեզիդենցիա)։ Հարկ չկայ թուել բոլոր փոխարքաներին, որոնք կատեպան էին կոչւում։

1053 թուին կատեպան դանում ենք Ահարոնին, որ առաջ Վասպուրականի կառավարիչն էր։ Ահարոնի անունը կապուած է Անիի ջրմուղի նորոգութեան և բարւոքման հետ։ Այդ ջրմուղը 12 վերստ է ձգւում։

Պէտք է ասել, որ բիւզանդական կառավարիչները մեծ ջանք էին գործ դնում, որ Անին պահպանեն իւր նախկին ծաղկեալ դրութեան մէջ, հովանաւորելով վաճառականական յարաբերութիւնը և թեթևացնելով մի քանի հարկերն ու տուրքերը։ Նրանք առանց ուշադրութեան չթողին Անիի արտաքին տեսքը։ 1059 թուին շինարարական աշխատանքներ կատարուեցին միջնաբերդում։ Դատելով յունական այն հոյակապ յիշատակարանի արձանագրութիւնից, որը քանդակուած է այդ առիթով, աշխատանքները բաւական նշանաւոր են եղել։ Քաղաքը ամրացնելու համար միջոցներ են ձեռք առնուել։ Պատնէշները են դրուած և շատ տեղերում Սմբատի պարսպի երեսը փոփոխուած է։ Այդ բանով կարելի է բացատրել արևմտեան անկիւնի աշտարակի վերայի յունական խաչի գոյութիւնը։

Այդ իսկ ժամանակ յոյները Անիումն էլ Բիւզանդիայումն էլ բոլոր ժամանակ զգոյշ էին մնում, երևի ամեն վարկեան Անիում խռովութիւն սպասելով։ Յունական համեմատաբար սակաւաթիւ բերդապահ զօրքը չէր կարողանում քաղաքը հնազանդութեան մէջ պահել։ Սակայն բիւզանդացիք չէին վախենում Անիում օտարազգի փոխարքայ նշանակելուց։ Կատեպան մագիստրոս Ահարոնը բոլորդ էր։ Վերջին երկու հակառակորդները—Բագարատ Վիկիացին և Գրիգորը, որ բիւզանդական քաղաքական յայտնի գործիչ էր և մեծ դեր էր խաղացել Կոմնենոսեան

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
100 64
19 67

յեղափոխութեան ժամանակ, իսկապէս վրացիացած քաղկեդոնական հայ էր։

Յոյներին վիճակուած էր շուտով ընդ միշտ կորցնել Անին։ 1065 թուին Սելջուկեան Ալփ-Արսլանը մտաւ այստեղ իւր յաղթական արշաւանքի ժամանակ, որպէս շարունակող իւր հօր եղբայր Տօղրուլի նուաճողական գործունէութեան։ Մի քանի օր Անին յամառութեամբ դիմադրում էր Ախուրեան գետի և ամուր պարիսպների շնորհիւ։ Միայն մի կողմն էր մի քիչ թոյլ, բայց այդ էլ չէր ընկճւում թշնամու յարձակման առաջ, ոգի իբրեն դիմադրութեան շնորհիւ։ Ալփ-Արսլանը կարծեց թէ յուսահատուեց քաղաքը առնելուց և պատրաստուեց հեռանալ, երբ Բագրատի և Գրիգորի դատապարտելի չափազանց զգուշաւորութիւնը ամեն բան կորսի մատնեց։ Հոգալով իրանց փրկութեան և միջնաբերդը պահպանելու մասին երկու կառավարիչները ամրացան միջնաբերդում կտրելով յարաբերութիւնը քաղաքի հետ։ Այս բանը սարսափեցրեց բնակիչներին։ Ալփ-Արսլանը օգտուեց շփոթութիւնից և Աստուածամօր տօնին խուժելով Անիի մէջ, սարսափելի աւերածութեան և աւարառութեան մատնեց։ Ի միջի այլոց Ջարդ ու փշուր եղաւ շքեղ Ջանը, որ կաթուղիկէի զարդն էր և գնել էր Սմբատը առասպելական գնով։ Կաթուղիկէի գմբէթից դուրս կորզուեց և տարուեց Նախիջևան արծաթեայ մարգաշափ խաչը։ Զեմ կրկնի պատմիչների նկարագրութիւնը Ալփ-Արսլանի արիւնահեղութեան

մասին, որը որպէս թէ լողացաւ, յատկապէս այդ նպատակով խողխողուած, հազար մարդկանց արիւնի մէջ։

1072 թուին Դուինի էմիր Աբու-լ-Սուարը գնեց Անին Ալփ-Արսլանից։ Այդ ժամանակից արդէն սկսում է մեր քաղաքի համար նոր դարաշրջան։ Մինչև անդամ հին պատմիչները այդ ժամանակամիջոցը համարում են Անիի վերածնութեան սկիզբը։ Յիրաւի Շէդդադեանների հարստութիւնը, որին պատկանում էր Աբու-լ-Սուարը շատ մեծ դեր է խաղացել Անիի պատմութեան մէջ, և Անին սկսած այդ ժամանակից քաղաքի նշանակութիւն ստացաւ և որպէս քաղաք անկախ միութիւն էլ կազմում. Ծագմամբ քուրդ Շէդդադեանների հարստութիւնը կանանց կողմից ազգակից էր Բագրատունիներին, որով տեղացիների աչքում նրա կառավարութիւնը պէտք է երևէր որպէս Բագրատունեաց թագաւորութեան վերածնումն։ Շէդդադեանները և ամենից առաջ Մանուչէն՝ Աբու-լ-Սուարի որդին,-անուանապէս էր միայն պարսկական իշխանութեան ներկայացուցիչ, նրանք իսկապէս իրանց հպատակ չէին ճանաչում։ և իրանց պահում էին Անիում որպէս անկախ թագաւորներ։ Շէդդադեանների օրով Անիի բարգաւաճելը անկասկած կապ ունէր Առաջաւոր-Արևելքի մուսուլմանական երկրների քաղաքային կեանքի զարգացման հետ։ Այժմ առանձին թափով պէտք է երևէր, առաջուց էլ նկատուած, Անիի բնակչութեան բազմացեղութիւնը,

որը շատ նպաստել է ԺԲ—ԺԴ դարերի գեղարուեստական յիշատակարանների առաջ գալուն։ Այդ յիշատակարանները կրում են իրանական—մուսուլմանական գեղարուեստի զօրեղ ազդեցութեան յայտնի երևոյթները։ Բոլոր այս բազմացեղ բնակչութիւնը ապրում էր մի ընդհանուր կեանքով։ Անիի մրցակիցի երեք լեզուեան արձանագրութիւնը հանդիսանում է իրական ապացոյցը այս խաղաղ կենակցութեան։ Հարկ չկայ Անիի կեանքի այս շրջանի որոշ վարկեանները մանրամասնաբար յիշատակել։ Որքան էլ այս տարօրինակ թուի, յատկապէս քաղաքակրթական ամենամեծ ստեղծագործութեան հենց այս ժամանակին՝ Անին շատ անկայուն կեանք էր վարում

Ջնայելով բնակիչների և Շէդդադեանների միջև եղած ներքին կռիւին, նրանք միշտ էլ չկարողացան իրանց ձեռքում պահել քաղաքը։ Արտաքին վտանգի դիտակցութիւնը բաւական զօրեղ էր։ Թէ Շէդդադեանները հոգսը էին անում Անին իրանց ձեռքում պահելու՝ երևում է և այն իրական վերանորոգութիւններով, որոնց ենթարկուեցին այդ քաղաքի պարիսպները։ Մանուչէի կատարած շինութիւնները ամրոցներում հաստատուում են ոչ միայն այդ լրացուցիչ պարիսպների յատկութեամբ և շարուելու ձևով, այլ և համապատասխան արձանագրութիւններով։ Մինչև անդամ այս զօրաւոր պարիսպների մէջ Շէդդադեանները չէին կարողանում իրանց բոլորովին

անվտանգ զգալ։ Զօդնեցին Մանուչէի պետական խմաստուն միջոցներն էլ, որը աշխատում էր Ալփ-Արսլանի կոտորածի երեսից փախած բնակիչներին վերադարձնելու։ Այս ժամանակ ուժեղացած Վրաստանը յայտնեց իւր իրաւունքները և 1123 թուին բնակիչների նշանաւոր մասի առքրիստոնեայ հարևանները արամադրութեան շնորհիւ վրաց թագաւոր Դաւիթ Շինարարը կալանաւորեց Մանուչէի որդի Աբու-լ-Սուարին, Անին ազատեց մուսուլմանների տիրապետութիւնից և իւր որդուն այնտեղ իբրև կառավարիչ թողեց։ Անեցիները մեծ ուրախութեամբ ընդունեցին վրացիներին և շատ օգնեցին նրանց՝ քաղաքը նուաճելիս։ Նրանք շատ զրգռուած էին Աբու-լ-Սուարի դէմ, որը չէր գնահատում իւր քաղաքը և, մինչև անդամ, մտադրուել էր վաճառել Կարս քաղաքի էմիրին 60,000 դինարի։ Սակայն շատ շուտով, արդէն 1126 թուին, երբ Դմիտրը յաջորդեց Դաւթին, Աբու-լ-Սուարի եղբայր Փազլունը պաշարեց Անին զօրեղ բանակով։ Նա չկարողացաւ քաղաքը կռուով առնել*, բայց երբ հանդիսաւոր կերպով խոստացաւ՝ թէ կը պահպանի Անին և իւր հօր շաւղին կը հետևի՝ Անին անձնատուր եղաւ նրան։ Փազլունը շուտով փորձեց խախտել իւր խոստումը, բայց չկարողացաւ։

* Քաղաքը յուսակտուր պաշտպանելու գործում մասնակցում էին կանայք էլ հերոսաբար փառաբանուած Այգեհիկ աղջկայ առաջնորդութեամբ։

ԺԲ. դարի ընթացքում Անին մի քանի անգամ մուսուլման տիրողներից անցաւ վրացիների ձեռքը. բայց և այն ժամանակ, երբ Անին մուսուլմանների ձեռքին էր գտնւում՝ կառավարիչները փոխելու դէպք լինում էր։ 1155 թուին Անին ապստամբուեց Շէդդադի դէմ և անձնատուր եղաւ նրա եղբայր Փադլունին։

1161 թուին հայոց Նասիր-ադ-դին Սուկման Բ. շահը մեծ զօրքով պաշարեց Անին. ազատելու համար եկաւ վրաց Գէորգ Գ. թագաւորը և սակաւաթիւ զօրքով յաղթեց շահարմէնին։ Գէորգը կացաւ Անիում մի քանի օր, և այնտեղ բերդապահ զօրք թողեց էմիրի իշխանութեան տակ։

1163 թուին Անին 30-օրեայ պաշարման ենթարկուեց Սելջուկների սուլթան Արսլան-շահի և Իլդիգիզ Աթաբէկի զօրքերից։ Նրանք կարողացան յաղթել Գէորգին. թէև Անին չառնուեց, բայց այնու ամենայնիւ անցաւ Արսլան շահի իշխանութեան։

1174 թուին Անին նորից վրացիների ձեռքին էր, որոնց իշխանութիւնը բաւական ամուր կերպով հաստատուեց այնտեղ։ Նոյն Գէորգ Գ.-ի օրով քաղաքապահների գլխաւոր Շանշէ Դադիանը փորձ արեց ապստամբելու, բայց այդ փորձը շուտով էլ ճնշուեց թագաւորի կողմից կառավարիչ կարգուած Իվանէ Օրբելեանի և իշխան Սարգիս Երկայնաբազուկի ձեռքով։ Գէորգ թագաւորի յաջորդ Թամարա թագուհու օրով Անիի կառավարիչ դարձան Սարգսի որդի Իվանէ և Զաքարէ եղբայրները, որոնք վրաց թագաւորութեան մէջ բարձր պաշտօններ ունէին։

Երկայնաբազուկ եղբայրները պատկանում էին հայոց, նոր առաջ եկած, իշխանական ցեղի և հաւանօրէն քուրդ ծագումից էին։ Երկայնաբազուկ եղբայրների զինուորական յաջողութիւնները բաւական նպաստեցին իրանց դիրքը Անիում ամրացնելու։ Արդաբիլի սուլթանի հետ պատահած դէպքը շատ բնորոշ է։ 1209 թուին Արդաբիլի սուլթանը, օգտուելով Երկայնաբազուկների բացակայութիւնից, եկաւ Անիի վերայ և Զատկի օրը, երբ բաց էին քաղաքի դռները, ներս խուժեց ու սարսափելի աւերածութեան ենթարկեց։ Զազատուեցին այն բնակիչներն էլ, որոնք այրերուում էին թաք կացել։ Մխիթայն եկեղեցիներում որպէս թէ սպանուել էին 12,000 մարդ։ Իմանալով այս՝ Երկայնաբազուկները շուտով զօրք գումարեցին, յոյսը դրած թագուհու օգնութեան վերայ՝ աւարի առան Արդաբիլը, 12,000 մարդ կոտորեցին այնտեղ և գերելով սուլթանին ու նրա ընտանիքը մեծ աւարով վերադարձան Անի։

Բայց բացի այս արտաքին հանգամանքներից՝ կային ներքին պատճառներ էլ, որոնց համար Երկայնաբաբուկ իշխաններն ու նրանց յաջողները Անիում ստացան անկախ վարիչների և համարեա թագաւորների ոյժ ու նշանակութիւն։ Անիում հայ թագաւորական հարստութեան և նրա ազգակից Լոռիի թագաւորների անկումից յետոյ ա-

ռաջ եկան առանձին նոր տոհմեր և մանր իշխանութիւններ, ինչպէս օրինակ Խաչէնը ու նոյն իսկ վերածնուած Լօռին։ Այս նոր տոհմերի մէջ աւելի զօրաւորը Երկայնաբազուկներն էին, որ ի դէպ՝ խնամէացել էին Խաչէնի տան հետ։ Երկայնաբազուկների առաջին քայլն եղաւ գրաւել Լօռին, որի վերայ նրանք կարող էին իրաւունք յայտնել և այն պատճառով, որ առաջ ծառայել էին Լօռիի թագաւորներին։ Երկայնաբազուկների Լօռիի վերաբերութեամբ իրաւունքը վրաց Թամարա թագուհին էլ ճանաչեց։ Երկայնաբազուկների ազդեցութիւնը վաղուց արդէն հաստատուած էր այս կողմերում։ Թագուհու վաւերացումն առաւել ևս կարևոր փաստ դարձաւ Երկայնաբազուկների բաղդի համար ապագայում։ Այսպէս, հայ նահանգները ոչ միայն լիակատար հանգիստ գտան հիւսիսային, այն ժամանակ, հզօր հարևանուհու կողմից, այլև գտնուեցին նրա անմիջական հովանաւորութեան տակ։ Ինչպէս էլ լինէր վրաց արքունիքում Երկայնաբազուկների դրութիւնը, հայերը, որ ապրում էին նրանց երկրների մէջ, որ բուն Հայաստանի մասերն էին կազմում, զգում էին իրանց լիակատար ազատութեան այս զգացումը աւելի զարգացած էր Անիում։ Եթէ հայ և վրացի պատմիչները չլինէին, չէինք էլ կարող մտածել՝ թէ Անին որ և է կախումն է ունեցել վրացիներից։ Յիրաւի, տեղում---Անիում-ոչ արձանագրութիւնների և ոչ էլ յիշատակարանների մէջ բոլորովին չի երևում

Վրաստանի քաղաքական տիրապետութիւն. գոնէ մինչև այսօր Երևան չեն եկել այդ բանը հաստատող նշաններ*. շատ հաւանական է որ այս տիրապետութիւնը միայն հովանաւորութեան յատկութիւն էր կրում։

Ընդհանրապէս քաղաքական անկախութիւնը կորցրած շրջանումն էլ-ԺԱ. դարի կէսից մինչև ԺԳ. դարը Անին շարունակում է ծաղկել որպէս հայ քաղաք։ Երբեմն նոյն իսկ կախումն, որը երբէք Անին հոգևոր և տնտեսական տարկական վիճակի մէջ չէ եղել դրած, անուանականից դարձել է վերացական։ Այս առաւել պատահում էր, երբ այս կամ այն քաղաքական նկատումով՝ յաղթողները հարկաւոր էին գտնում քաղաքի կառավարութիւնը յանձնել իշխանական տոհմերին։ Անիի օտարերկրեայ և օտարազգի վարիչները, երբ միանգամ հաստատւում էին Անիում, ընդհանրապէս աշխատում էին անեցիների համակրութիւնը վաստակել անշեղ գործադրելով օրինակութիւնը և լայն ազատութիւն տալով տեղական հաստատութիւններին։ Իրերի այս դրութիւնը ապացուցւում է հայ ու օտարազգի գրական յիշատակարանի ուսումնասիրութեամբ, այդ դրութիւնը հաստատւում է այն ժամանակի իրական յիշատակարաններով ու շինութիւններով։

Անիի լիակատար ինքնավարութիւնը բնորոշ-

---

*. Այս մտքով շատ հետաքրքիր է վրացերէն արձանագրութիւնը, որ գտնուած է 1910., թ. և որի մասին յետոյ խօսք կը լինի։ Ռուս. հեղ.

ւում է նոյնպէս աւազների այն խորհրդով, որը վարում էր քաղաքի բոլոր գործերը, և նրանց կարծիքը շատ անգամ աւելի նշանակութիւն էր ունենում քան կառավարչի ցանկութիւնն ու հայեացքը։ Աւազների այս խորհուրդը, որի ծագման մասին առ այժմ դեռ տեղեկութիւն չկայ, յամենայն դէպս, գոյութիւն ունէր Շէդդադեանների, վրացի փոխարքաների և Երկայնաբազուկների տիրապետութեան ժամանակ։

Անիում Երկայնաբազուկների գործնէութեան հետ կապ ունի որպէս առանձին աչքի ընկնող շէնքերի, նոյնպէս և ընդհանուր քաղաքային, և ի մասնաւորի՝ ամրոցների կառուցումն։ Արձանագրութիւնները հաւաստատիացնում են, որ այս ժամանակամիջոցում քաղաքի պարիսպները նորոգուել են, շատ նոր աշտարակներ են կառուցուել։ Գուցէ և այդ ժամանակ շինուած լինի Անիի միակամար գեղեցիկ կամուրջը հաւանօրէն հնագոյն կամրջի տեղը։ ԺԳ. դարում քաղաքը ամենամեծ չափին հասաւ։ Նրա մէջ, պատմիչների ասելով՝ հաշուում էր 100,000 բնակիչ, 10,000 տուն և 1001 եկեղեցիներ թիւը մանաւանդ շատ ընդհանրացած էր։ Յիրաւի, Անիում եկեղեցիները շատ շատ են։ Գիտական—քաղաքակրթական հաստատութիւններից յիշատակութեան արժանի է Դպրեվանքի ճեմարանը Անիից մի քանի վերստ հեռու։

Երկայնաբազուկների զօրութեանը Անիում վերջ տուեց մոնգոլների արշաւանքը, որ կարճ

ժամանակում ոտնակոխ արեց Կովկասի նշանաւոր մասը։ 1236 թուին մոնգոլների հզօր բանակը պաշարեց Անին։ Մոնգոլների դեսպանները, որ ուղարկուած էին Անիի կառավարիչ Շահանշահ* Երկայնաբազուկի մօտ առաջարկելու՝ որ անձնատուր լինի, սպանուեցին։ Այն ժամանակ մոնգոլները յարձակմամբ առան քաղաքը և սարսափելի աւերածութեան ենթարկեցին։ Մոնգոլները Անին առնելով խլոյն չփոխեցին կառավարիչներին, որոնք այդ ժամանակ «պարոն» էին կոչւում։ Միայն ժամանակ անցնելուց յետոյ Երկայնաբազուկները իրանց տեղը զիջան ուրիշ իշխանների, որոնք սովորաբար հայ էին լինում և նշանակւում էին մոնգոլ խաների կողմից, որոնց համար Անին դարձել էր առանձին մասնական տիրապետութիւն (խասինջա)։

Յետոյ Անին անցնում է մոնգոլական մի հարստութիւնից միւս հարստութեան և մինչև ԺԵ. դարը պահում է իւր գոյութիւնը որպէս քաղաք, և այդ դարի կէսին Անիում դեռ ոսկի դրամ էին կտրում։

Դժուար է ասել՝ թէ ինչն եղաւ պատճառ Անիի վերջնական կործանման, որ ԺԶ. դարում արդէն մի գիւղ էր։ Վերջնական հարուածը քաղաքին եղաւ, հաւանօրէն, Լանգ—Թամուրի ար-

* Դա այն Շահանշահն էր, որի հետ տեսնուեց Եւրոպացի յայտնի ճանապարհորդ Բուբրուկը, որ Մոնգոլիա ուղևորուելիս՝ ճանապարհի վերայ այցելեց Անին և հանդիպեց այնտեղ մի քանի միսիոնարների էլ։

շաւանքով, բայց, ի հարկէ, աւելի մեծ նշանակութիւն ունէր Անիի բնակիչների գաղթը, որոնք սարսափահար էին եղել անընդհատ արշաւանքներից և Անիում յաճախակի կրկնուող երկրաշարժներից։ Աւանդութեամբ, որ հաստատւում է հին պատմիչներով՝ Անիի բնակիչները գաղթեցին հարաւային Թուսաստան, այս տեղից անցան դէպի արևմուտք և տեղաւորուեցին Գալիցիայում ու Լեհաստանում։

ԺԸ. դարից սկսած Անին, որպէս աւերակ պատկանում էր Թուրքական բէկ Խաթուն—օղլիներին, որոնցից վերջինը դեռ կենդանի է։ 1878 թուին պատերազմից յետոյ Անիի շրջակայքը Կարսի նահանգի հետ անցաւ ռուսաց տիրապետութեան։

III.

Այժմ Անին ներկայանում է անբնակ աւերակ, ձգուած անկանոն մի եռանկիւնի տարածութեան վերայ, որ 150 դեսիատինից աւելի է։ Եթէ մօտենանք Անիին հիւսիսային կողմից, նա մի քիչ հեռուից՝ չի թողնում այն բոլորովին ամայութեան տպաւորութիւնը՝ որպիսին համակում է քաղաք մտնողին։ Բարձր, մի ժամանակ անարկու քաղաքային պարիսպները մասամբ թաքցնում են քաղաքի ներքինը։

Այդ պարիսպները կոչւում են Սմբատեան և նրանց կառուցումն վերագրւում է Սմբատ Բ.-ին։ Բայց նրանք չեն մնացել իրանց սկզբական դրութեամբ։ Սմբատ թագաւորի պարիսպները, ժամանակի ընթացքում, միշտ նորոգուել են, թանձրացել են, և շատացել է աշտարակների թիւը։ Տեղատեղ, ուր պարիսպների երեսաքարերը թափուել են, տեսանելի է աւելի հին շարուածքը, և այդպէս երբեմն երևան են գալիս երեք և մինչև անգամ չորս շերտ երեսաշարք։ Սմբատեան պարիսպները, որպէս և Անիի բոլոր միւս յիշատակարանները, գերազանցում են նրբութեամբ և ուղղանկիւն, ողորկ տաշուած ու խիտ դասաւորուած քարերի կանոնաւոր շարուածքով։ Պարսպի գոյնը աւելի կենդանացնելու համար շարուածքի մէջ տեղտեղ գործադրուած են բացի դեղնագոյն քարերից՝ կարմիր և սև քարեր, որ

սովորական են Անիի միւս շինութիւնների համար։ Այս գունաւոր քարերը երբեմն կազմում են գօտիներ աշտարակների վերայ, երբեմն էլ դասաւորուած են շախմատի կարգով. երբեմն զանազան ձևեր են պատկերացնում, մեծ մասամբ՝ խաչի։ Զնայելով որ շատ տեղերում պարիսպները խիստ կոփների հեաքեր են կրում և ծակոտուած են սլաքներով, բաբաներով և բաղխող գործիքներով, նրանց վրայ պահպանուել են ուռուցիկ զարդեր, որ ներկայացնում են արծիւ, վիշապ, ցլի գլուխ և մինչև անգամ ապակեայ ու յաղճապակեայ կիսագնդակների մնացորդներ, որոնք հագցրուած են առանձին քարերի մէջ։ Անիի պարիսպները ամենալաւ կերպով ընորոշում են անեցիների ձգումն, ըստ յարմարութեան ամեն բան զարդարել որ և է կերպով։ Այդ տեսակ զարդարանքներից պէտք է ջոկել քաղաքի Գլխաւոր դրան մօտ գտնուած վազող տիգրի ուռուցիկ քանդակը, խաչապակ գնտակը ճերանին, որը Թերևս Անիի զինադրօշն էր (ԺԳ. դարում)։ Բացի գլխաւոր դռնից կարելի է քաղաքի մէջ մտնել մի քանի այլ դռներով ու դռնակներով։

Քաղաքի ներքինը տխուր տեսարան է ներկայացնում։ Շինութիւնների մեծ մասից մնացել են քիչ շատ բարձր բլրակներ կամ խորը փոսեր։ Միայն տեղ տեղ բարձրանում են դեռ կանգուն մնացած հատ հատ յիշատակարաններ։ Դրանց մէջ առանձին տպաւորութիւն է թողնում կաթուղիկէն, որ հիմնարկուել է Սմբատ Բ. թագաւորի օրով և աւարտուել 1000 թ. Կաղրամիդէ թագուհու ձեռքով, որը թաղուած է տաճարի արևելեան որմի տակ։ Բարձր պիլոններ (սիւնի բուն), նուրբ, թեթև թեքուած կամարները, արևելեան կողմից մռայլ խորանները, գմբէթի տեղ՝ բաց երկինքը տաճար մտնողին հիացնում են։ Տաճարի տեսքը արտաքուստ փոքր ինչ խանգարում է գմբէթի բացակայութիւնը, գմբէթի, որ ըստ աւանդութեան խոնարհուել է 1319 թուին, սարսափելի երկրաշարժի ժամանակ, որ կործանիչ ազդեցութիւն է ունեցել Կովկասի շատ յիշատակարանների վերայ։

Տաճարից դէպի արևելք բարձրանում է Փրկչի աշտարակաձև, բազմանկիւն եկեղեցին, որը շինուած է ԺԱ. դարի առաջին կիսում և վերանորոգուել է ԺԳ. դարի երկրորդ կիսին։ Եկեղեցիների այս հետաքրքիր երևոյթը, միքանի մեծ աբսիդներով, որոնցից մէկը յատկացուած է լինում բեմին ու սեղանին, բաւական հազուադէպ է Հայաստանում, բայց Անիում այդպիսի մի եկեղեցի էլ կայ. նա գտնուում է կաթուղիկէի միւս կողմը, դիտակի ձորաբաշին, և պատկանում էր Աբուղամրենց իշխաններին. այն շինուած է համարեա միաժամանակ Փրկչի եկեղեցու հետ, որը կառուցուած է նոյն տոհմի իշխանների ներկայացուցիչներից մէկի ձեռքով։ Աբուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցումն էլ Փրկչի տաճարումն էլ կան որմնանկարների (ֆրեսկ) մնացորդներ, առաջինում համարեա բոլորովին ջնջուած։ Փրկ-

չի տաճարում որմնակարները նկարած են ԺԳ. դարի վերջերում, և, ի նկատ առնելով որ որմնանկարները Հայաստանում հազուադէպ են, շատ հետաքրքիր են։ Բայց ոչ նկարչութեան և ոչ պահպանուած լինելու կողմից նրանք չեն կարող մրցել Անիի միւս եկեղեցու նկարների հետ։ Այդ եկեղեցին գտնւում է Ախուրեան ձորի զառի վայրի վերայ Փրկչի եկեղեցուց մի քիչ ներքև, շինել է 1215 թուին Անիի հարուստ իշխան հայ-քաղկեդոնական Տիգրան Հոնենցը, որ Երկայնաբազուկ եղբայրների մերձաւորն էր։ Արտաքուստ եկեղեցին զարդարուած է նուրբ քանդակով, որ ձևացնում է բուսական ցանցի մէջ խճճուած գանազան գազաններ, իսկ ներքուստ ամբողջովին նկարուած է։ Որմնանկարները ներկայացնում են աւետարանական տեսարաններ, և մի շարք դէպքեր Հայաստանի լուսաւորիչ Ս. Գրիգորի կեանքից, որի անունն էլ նուիրուած է տաճարը։ Տիգրան Հոնենցի այս տաճարը Անիի ամենալաւ յիշատակարաններից մէկն է։ Նոյն Տիգրան Հոնենցը կառուցել է և մի փոքրիկ վանք, որ գտնւում է նոյնպէս ձորի զառի վայրի վերայ։ Անիի այս գեղեցիկ անկիւնը զարդարուած է փոքրիկ, ճաշակաւոր աշտարակ—մատուռով, որը ներկայացնում է Փրկչի տաճարը՝ փոքր դիրքով։ Այդ վանքը ընդհանրապէս կոչւում է կուսանաց վանք։ Սակայն նոյն կոչումն տալիս է Անիի բոլորովին ծայրին, բարձր, ապառաժեայ թերակղզու վերայ մեկուսացած եկեղեցուն էլ. մեկուսացած աշտարակը, որ բարձրանում է թերակղզու բարձրաւանդակի եզրին, նոյնպէս և բոլոր թերակղզին, կոչւում է Կոյսի–Ամրոց (Ղըզ–Ղալա)։ Կոյսի–Ամրոցի եկեղեցին, որ համեմատաբար աւելի և առատօրէն զարդարուած է շատ գեղեցիկ քանդակներով և ծածկուած բազմաթիւ արձանագրութիւններով, կապ ունի Երկայնաբազուկ եղբայրների շինարարական գործունէութեան հետ։ Ինչպէս յայտնում է արձանագրութիւնը, այս եկեղեցին կառուցուած է այնտեղ, ուր Հայաստանի լուսաւորիչ Ս. Գրիգորը, կործանելով Անահիտ աստուածուհու բազինը, եկեղեցի շինեց։

Թերակղզու և քաղաքի գլխաւոր մասի միջև, բաւական բարձր բլրի վերայ է Անիի միջնաբերդը։ Նրա կենտրոնը գրաւում է արքայական ապարանքը։ Նրա եզրին գտնւում է բաւական լաւ պահպանած սաղաշէն (բազիլիք) փոքրիկ եկեղեցի։ Անիի այս ամենահին շինութիւնը իւր վերայ ունի հայերէն արձանագրութիւն 622 թուին Քս. ծ. յետոյ, և բազմաթիւ չափազանց հետաքրքիր զարդաքանդակներ, որոնք բոլորովին ինքնատիպ են հայ գեղարուեստի այս հեռաւոր ժամանակաշրջանի համար։ Բացի այս եկեղեցուց, բերդում կան դրձեալ երկուսը, որոնցից մէկի դռան ճակատը (պօրտալ) զարդարուած է ԺԱ. դարին վերաբերող հին գեղարուեստի հետքերով, երկրորդը, որ մօտաւորապէս ժամանակակից է նրան, մանրամասնութեան մէջ բաւական հետաքրքրական բաներ ունի։

Միջնաբերդի ու Կաթուղիկէի միջև, համարեա մէջտեղում, Ախուրեանի ձորաբաշին գրանում է կրկնայարկ մզկիթ բարձր, բազմաշերտ մինարէթով։ Անիի ամենագեղեցիկ զարդն է այս մզկիթը, իւր խոշոր սիւներով, որոնք պսակաւորուած են անագին խոյակներով, և հոյակապ առաստաղով՝ որ զարդուած է հարթ քառակուսիների, և շարուած է գոյնզգոյն քարերով։ Այս շինութիւնը մզկիթ է դարձրել Մանուչէ էմիրը, նորոգելով և փոքր ինչ էլ փոփոխելով, իսկ առաջ նա ծառայել է մեզ անյայտ նպատակի, հաւանօրէն՝ կապ ունէր մօտիկ եղած քաղաքային, Աշոտի համարուած, պարսպի և Ախուրեանի կամուրջի հետ, որ մէկն էր այն երկու կամուրջներից, որոնց հետքերը քաղաքի սահմանում դեռ մնում են։ Այդ կամուրջը ունէր մի կամար 14 սաժէն լայն անցքով։

Կաթուղիկէից դէպի հիւսիս արևմուտք Անիի երկրորդ մզկիթի մինարէթի փլուածքի կոյտերից ոչ հեռու գտնւում են Առաքելոց եկեղեցու աւերակներն ու նրա գաւիթը։ Գաւիթը (շինուած ԺԲ. դարում), շատ աւելի լաւ է պահպանուել քան (Ժ. դարում շինուած) եկեղեցին, և իւր գոյնզգոյն առաստաղով, քանդակաւոր բարաւորներով և ստալաքտիկական նիշերով (խորշ) մեծ տպաւորութիւն է թողնում։ Նրա հոյակապ ստալակտիքական զմբէթը փոքրիկ լուսամուտով վերեւում համարեա կախուած է չորս շքեղ և վայրահակ կամարների վերայ, որից երկուսը արդէն

խմել են։ ԺԲ. դարի այս քմահաճոյ քանդակները քիչ են պատշաճում իսկական եկեղեցու զոնների լուրջ ճակատներին, որոնք զարդարուած են տերևաքանդակ խոյակներով, ինչպէս է բերդի եկեղեցին։ Ս. Առաքելոց եկեղեցու ճակատի (ֆասադ) քանդակները իրանց նրբութեամբ շատ յետ են իշխանական ապարանքի (շինուած ԺԲ—ԺԳ. դարերում) ճակատից։ Այդ ապարանքը գտնւում է Անի գետակի (Մաղկոցաձոր) ձորաբաշին։ Ապարանքի դրան ճակատը շարուած էր քանդակաւոր սասղներով և խաչերով, որոնք այժմ, ափսոս, շատ ջարդուած են։ Այս ահագին շինութիւնը երեք յարկանի է, որոնցից ներքինը մասամբ գետնի մէջ է գտնւում, կիսախաւար է և ծածկուած է բարձր կամարներով։

Եթէ յիշենք և վրայ փոքրիկ սպասչէն (բազիլիք) եկեղեցին էլ, որը գտնւում է Ս. Առաքելոց եկեղեցուց դէպ ի հիւսիս, դրանով արդէն թուած կը լինենք Անիի բոլոր յիշատակարանները, որոնք գետնի երեսին են։ Սակայն քաղաքի պարիսպներից դուրս կան մի երկու աւերակներ էլ, ի միջի այլոց փոքրիկ, շատ գեղեցիկ, և իւր շինուածքով բացառութիւն կազմող երկյարկ եկեղեցին, որ սովորաբար Հովուի եկեղեցի է կոչւում։ Քաղաքի մէջ կան նաև ամբողջ մի կարգ առանձին շինութիւնների վայրի ու անտաշ ահագին քարերի կուտակներ։ Այդ շինուածքները ձիթհաններ են, որ կիկլոպեան շինուածքների ապաւորութիւն են թողնում, և դրանց այժմ այդպէս էլ համարում են։

Այդպիսի առասպելական հնութիւն են երբեմն վերագրում արհեստական բազմաթիւ այրերին, որոնցով լի են Անիի ձորերը, մանաւանդ Անի—գետակի ձորը. Բայց, ի հարկ է, այս քարայր բնակարանները, որոնք երբեմն մի քանի սենեակներ ունեն, Անի քաղաքի աւելի յետին ժամանակներին են վերաբերում, երբ նրանց մէջ ապրում էին քաղաքացիք, որոնք հնար չունէին վերևում, պարսպից ներսն ապրել։ Անիի բարգաւաճման ժամանակ այրերում շինուել են ընդարձակ դամբարաններ։

Այս այրերը չպէտք է շփոթել «Ստորերկրեայ–Անիի» հետ, որ Անիի ստորերկրեայ բազմաթիւ անցքերից մէկն է։ Այդ բոլոր անցքերը հաւանօրէն շինուած են ռազմական նպատակով։ Դրանցից ամենամեծը «Ստորերկրեայ Անին» է, որ մէջտեղում ընդհատւում է, թողնելով մի երկար ընդարձակ դահլիճ, ցածլիկ, մի քանի քարէ սիւների վերայ հանգչող, առաստաղով։ «Ստորերկրեայ Անի»-ի մի նշանաւոր մասը փուլ է եկած և պեղումների պէտք ունի։

Բայց աւելի հարկաւոր է պեղումն վերերկրեայ Անիում, որի ամենալաւ յիշատակարանները, ինչպէս պարզւում է, ծածկուած է աւազակոյտերով։

IX

Առաջին կարգաւորեալ պեղումները *) Անիում ձեռնարկուեցին 1892 թուին Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանի պրոֆեսսոր Ն. Մառի ձեռքով, որ իւր փորձերը կրկնեց 1893 թուին էլ։ Այս պեղումները որ շատ ընդարձակ տեղ էլ չեն բռնում, բաց են արել շատ հետաքրքրական բաներ, ինչպէս Ս. Գրիգորի եկեղեցու մնացորդները, Տիգրան Հոնենցի շինած եկեղեցու փոքրադիր օրինակը, երկու ուրիշ եկեղեցիների մնացորդները. աղքատների տների մի ամբողջ փոքր թաղ և, վերջապէս, հասարակաց բաղանիքը։ Բայց Ն. Մառը ընդհատեց պեղումները, որովհետև նա չէր ցանկանում որ գրանուած մանր իրերը քաղաքի սահմանից դուրս տարուեն կամ բաղդի քմահաճոյքին թողնուեն ճարտարապետական մասերը, գարդաքանդակները, արձանագրութիւնները ևն։

*) Անիի պեղումները, որ սկսուած են Կայսերական Հնախօսական Յանձնաժողովի նախաձեռնութեամբ ու միջոցներով, համարեա այդ ժամանակից սկսած շարունակւում են բացառապէս հայ հասարակութեան օժանդակութեամբ, մասնաւոր անձանց, զանազան հասարակական հաստատութիւնների և գլխաւորապէս՝ Ս. Պետերբուրգի հայ եղեցիների կալուածների կառավարութեան Խորհրդի գումարներով։

Միայն 1904 թ. երբ նիւթական միջոց գտնուեց Մանուչէի մզկիթը թանկարան դարձնելու, պեղումները վերսկսուեցին և այն ժամանակից սկսուած շարունակւում են ամեն տարի ամառները։ Այս պեղումները, գիտական տեսակէտով տուին հարուստ գիւտեր, և այդ բոլորը պահւում են տեղումը։ 1908 թուին հարկ եղաւ նոր յատուկ թանգարան շինել, այժմ այդ էլ լցուած է, և մտադրութիւն կայ նորը, աւելի ընդարձակը, շինել։

1904 թուի պեղումները երևան հանեցին Աշոտ թագաւորի շինած պարիսպների գիծը, որոնք Սմբատի պարսպի համեմատութեամբ ցած են, բայց հզօր են ու ամուր կառուցուած բաւական մեծ, կարմիր քարերով։ Սմբատի գլխաւոր պարիսպների մօտ պեղումների փորձը եղել է 1907 թուին։ Կարսի դռան այն ժամանակ սկսած պեղումն աւարտուեց 1910 թուի։ Դուռը, որ առաջ բոլորովին ծածկուած էր, այժմ ամբողջովին երևան է եկել. Այստեղ շինուածական մեծ բաներ գտնելու յոյսերը չարդարացան. թէև զանազան տեսակի շատ սլաքներ գտնուեցին։ Այս պեղման գլխաւոր նշանակութիւնը այն է, որ առաջին անգամ երևան եկան քաղաքի կարևոր ամրութիւնների մասերը, այն է, դռների փեղկերը։ Մեծազլուխ բևեռների մեծ թուին նայելով՝ կարելի է դատել, թէ երկաթի հաստ շերտով պատած դռները ինչպիսի խստութեամբ մեխուած էին։ Դռների հաստ տախտակեայ, գօտի-

ներից, որոնց երկու ծայրերին հագցրած են եղել կրնկակ ծալուածքով կռացրած ծղեխները, պարզ ցոյց են տալիս թէ նրանք շատ խոշոր են եղել։ Դռները փակւում էին հաստ նիգերով, աւելի ճիշտ՝ գերաններով, որոնք ծայրերին ողակներ ունէին։ Ուշադրութեամբ հետամուտ լինելով՝ այդ ճնացորդների համեմատ կարելի է վերականգնել դռների ձևը։

1910 թուին մաքրուեցին քաղաքի գլխաւոր դռներն էլ. այստեղից պեղումները ուղղուեցին քաղաքի գլխաւոր փողոցով, որ ձգւում է դէպ ի միջնաբերդը։ Այս փողոցի մասը, հին քաղաքում, Աշոտի պարիսպներից ներս, պեղուած էր դեռ 1908 և 1909 թուերին։ Փողոցում, բոլոր տները հիմնայատակ են եղած բացի մի երկու կարգ շարքերից։ Մանուչէի մզկիթի առջևի թաղում պատերը համեմատաբար աւելի լաւ դրութեան մէջ են պահպանուել, և փողոցի այդ մասը աւելի զօրեղ տպաւորութիւն է թողնում։ Պեղուած թաղերից ոչ մէկումն էլ մեծ շինութիւնների հետքեր չերևեցին, բացի մի հիւրանոցից, որի մասին խօսք յետոյ կը լինի։ Արևելեան քաղաքի համար շատ հետաքրքրական և բնորոշ են դէպի փողոց դուրս եկած փոքրիկ, բայց տերբասները, որ բռնում են փողոցի կիսից աւելին, նոյնպէս և դրսից ձգուած քարէ սանդուղները։ Դուրս եկան մեծ քանակութեամբ վայրի խոշոր քարեր, որոնք պաշտպանելիս են եղել շինութիւնների անկիւնները արշաւասոյր սայլերի բաղխումներից, տնե-

ի մուտքերը անձրևաջրերից պաշտպանելու համար՝ սալեր և նստելու համար՝ ցածրիկ թումբեր, որ տեղ տեղ բոլորովին նման են այժմեան մայթերին։ Քարայատակի հետքեր փողոցի բաւական մեծ մասում չեն երևացել, որ յայտնի չափով կարելի է մեկնել թէ պեղուած մակերևոյթը ամեն տեղ չի հասել հնագոյն քաղաքի հաստատ խտահողին։ Քաղաքի գլխաւոր դռների առաջ փողոցը յատակած է վայրի բաւական խոշոր քարերով. այնուհետև միջնաբերդի ուղղութեամբ անցնում է գեղեցիկ խճուղի (շոսսէ), քարած մանր և շատ խիտ խճով. քիչ հեռու, փողոցի առաջուց պեղուած մասում պահպանուել է մի գիծ, որ շատ լաւ քարուած է փոքր, բաւական կոկուած, սալերով։

1910 թուին բացուեց Անիի առաջին հրապարակը, հետաքրքրական նրանով, որ նրա տեղում, բայց աւելի խորը շերտում, կանգնած է եղել ընդարձակ շինութիւն, որ սակայն չյաջողեց այս տարի բաց անել։

Փողոցի վերայ, աւելի ճիշդ, փողոցի տակ դուրս եկաւ հին ջրմուղ (водопроводъ). այդ շարունակութիւնն է այն գծի, որ բացուել էր դեռ 1904 թուին, քաղաքի պարսպից դուրս, և գալիս էր Սօղիւտլու գիւղի աղբիւրներից. 1908 և 1909 թուերին արդէն բացուած էր փողոցի այդ ջրմուղը։ 1910 թուին երեք տեղեր երեք զանազան տիպի ջրմուղներ էլ բացուեցին։ Աշոտի պարսպի մօտ՝ առաջուց յայտնի տիպի սովորական խողովակներով, որոնք ծածկուած են քաշարքով։ Հիւրատան առաջ՝ նոյն ձևի, բայց ուրիշ տեսակ խողովակով. այսինքն տակառաձև, պրկուած պատշաճաւոր կաւէ օղակներով։

Ամենահետաքրքրական ջրմուղային շինուածքը գտնուել է բաւական խորութեամբ Ս. Առաքելոց եկեղեցու առաջի փողոցում. խողովակները շատ հազուագիւտ տեսակի են. վերևից ներքև են տափակեցրած, դասաւորած են շատ լաւ շինուած և միմեանց պինդ հագցրած քարէ խողովակների մէջ. կողքովը ձգուած է քարաշար առու, այնքան լայն, որ մարդ կարող է միջովը սողալ, այդ կարող էր, ծառայել թէ անասուններ ջրելու և թէ այնտեղից ջրմուղի կանոնաւորութեան հսկելու։

Բացի դրանից քաղաքից դուրս գտնուած են խողովակներ, որ ձորի աղբիւրներից քաղաք են գալիս։ Այսպիսով ջուրը քաղաքում մատակարարւում էր ոչ միայն Սօղիւտլուի աղբիւրներից, որ 12 վերստի վերայ է գտնուում. այլ ջրմուղը օգտւում էր մօտակայ աղբիւրներից էլ։

Հետզհետէ գտնուող ջրմուղների գծերը և այն էլ զանազան տիպի, խոստանում են առհասարակ հարուստ նիւթ ընձեռել և պահանջում են մասնագիտական հետազօտութիւն։ Այն ժամանակ միայն կարելի կը լինի ներկայացնել այս հոյակապ շինուածքի պատկերը, որի սիստեմի մէջ մտնում են ճիւղաւորուած կաւէ և երկաթէ խողովակները, որոնք գտնուած են արքունի ապարանքում։ Պէտք չէ մոռանալ, որ Անիի ջրմուղը

շինուած է մինչև ԺԱ. դարը, երբ այն արդէն վերանորոգուում էր։

Բացի քաղաքային այս հասարակական շինուածքներից՝ պեղումները բաց են արել մի քանի առանձին շինութիւններ էլ, ամենից առաջ՝ 1905 և 1906 թուերին բոլորակ անդրի տաճարի աւերակները, այս տաճարը Գագիկ Ա. թագաւորը կառուցել է 1001–1015 թ։ Այս մի հոյակապ տաճար է, որի առանձնայատկութիւններն էին գեղեցիկ սիւները դասաւորուած բոլորակի մէջ գծուած խաչի ձևով. ունէր երեք յարկ, թէ իւր չափերով (բարձրութիւնը մօտ 48 մետր), թէ իւր բոլոր տեսքով, սիւներով ու քանդակներով ակնատեսների աչքին հանդիսանում է նա հրաշալիքի պէս մի բան։ Ցիրաւի, այս շինութիւնը Անիում իւր հաւասարը չունի, և նոյն իսկ հայկական ճարտարապետութեան մէջ այդ մի հազուադէպ տիպ է, որը առ այժմ միայն երեք չորս հատ է։ Այդ ձևի տաճարներից ամենահինը Զուարթնոց եկեղեցին է (Է. դար), Էջմիածնի մօտ (Երևանի նահանգում), որը իբրև օրինակ է ծառայել Գագիկի շինութեանը։ Արտաքուստ տաճարի որմին հատատուած է եղել Գագիկ թագաւորի մեծ (3½ արշ.) քարէ ներկուած արձանը։ Թագաւորը ներկայացուած է կարմիր խալաթով, կրծքին խաչ, խալիֆի ընծայած մեծ, ճոխ փակեղով (չալմա) և իւր կառուցած տաճարի իսկական մանրադիրը (մոդել) ձեռքին։ Գագիկի մօրուաւոր դէմքը ուժի և լրջութեան արտայայտութիւն ունի։ Արձանը պահւում է Անիի թանգարանում։

Գագիկի տաճարի շուրջը պեղման ժամանակ դուրս եկաւ աղքատ տների մի ամբողջ թաղ։ Արևմտեան կողմից մասամբ բացուեցին մի մեծ տան մնացորդներ և նրա հոյակապ բարաւորի—դուռն ճակատի—(պօրտալ) մասերը, բարդ մօզայիք աստղներով և բոմբերով, որոնք հոծ են ամենատեսակ նկարների քանդակներով։

1907 և 1908 թուերի պեղումները աւելի ընդարձակ չափերով էին։ Պեղուեց միջնաբերդի ապարանքը, շինուած թագաւորների ժամանակ, բայց յետոյ (մինչև ԺԳ. դարը) փոփոխուած և նորոգուած։ Նրա որմերը, որ այժմ խեղճուկ և ծեփերը պոկոտուած են, մի ժամանակ հոծ էին հարուստ զարդարանքներով։ Մի դահլիճում կար շատ գեղեցիկ ծեփ, որը ներկայացնում էր կենդանիների նկարներ բուսական շրջանակների մէջ։ Մի ուրիշ բազիլիքական դահլիճում որմերը նկարուած էին պատերազմական կամ որսորդական տեսարաններով. որմերը, բացի նկարներից, թանձր ոսկեզօծուած են եղել։ Այդտեղ կար փայտեայ կամար նուրբ քանդակներով։ Առաստաղը նոյնպէս ունեցել է, ոչ թէ բոյսերի կամ կենդանիների, այլ երկրաչափական ձևերի քանդակներ։ Ապարանքում գտնուեցին ներկերով նուրբ նկարուած փոքր տախտակներ։ Ի հարկէ ապարանքի այդ բոլոր շքեղ յարդարանքի մնացորդները ամենախեղճ դրութեան մէջ երևան եկան, բայց

դրանցով լիովին կարելի է պարզել և վերականգնել շինութեան ընդհանուր բնաւորութիւնը։ Ապարանքի մի անկիւնումն էլ զետեղուած է փոքրիկ, բայց շատ յարմար, բաղանիքը, իւր նախասենեակով, աւազանով, քարէ տաշտերով և երկու, ջեռուցիչ, խցիկներով։ Մեծ կաթսայից միայն բոյնն է մնացել։ Բաղանիքի պատերում յարմարեցրած են ջրամբարից սկսած, տաք և պաղ ջրի նուրբ խողովակներ. առանձին հատ խողովակը մատակարարում էր հարկաւոր ջրի ամբողջ պաշարը, իսկ նման միւս խողովակը ծառայում էր անասունների համար։ Ապարանքի մի դահլիճը, երկրորդ յարկում, նայելով նրա չափերին և լուրջ ճարտարապետութեանը, ոչ թէ բնակութեան, այլ ընդունելութեան համար է եղել։ Ապարանքը առայժմ ամբողջովին չէ բացուած։

1907 թուին, բացի ապարանքից, Ս. Առաքելոց եկեղեցուց ոչ հեռու, բացուեց հիւրատուն, որ բաղկացած է երկու ընդարձակ դահլիճներից, քարէ յատակով. դահլիճների մէջ տեղում կայ մի մի ջրամբար, շուրջանակի ձգւում էր բարձր թումբ նստելու և բեռնակիր կենդանիների բեռները վար առնելու համար։ Այս թումբի վերայ բացւում են փոքր սենեակների—«համարների»—դռները։ Հիւրանոցի լաւագոյն զարդարանքը, որ շատ լաւ շինուած էր, պօրտալն էր, ուր քանդակուած ասպերի, բոմբերի, խաչերի, բազմանկիւնների մոզայիք նկարները միանում էին ուռուցիկ սֆինկսների, վիշապների և վագրների

հետ։ Այս հիւրանոցը ԺԲ—ԺԳ. դարերի բնորոշ յիշատակարանն է։

1909 թուի պեղումներով մաքրուեց, Ս. Առաքելոց եկեղեցին, մասամբ նրա գաւիթը և շրջապատ ընդարձակ հրապարակը, ուր գտնուեց մի փոքրիկ եկեղեցի է.—Ը. դարի և Բարսեղի հետաքրքրական յիշատակարանը 1184 թուին։ Այս պեղումների ամենալաւ գիւտն է Ս. Առաքելոց եկեղեցու հաղուագէպ խաչաձև յատակագիծը և նրա հինգ գմբէթներից զլխաւորի մնացորդը, որ համարեա միակն է հայկական ճարտարապետութեան մէջ. նա արտաքուստ ծածկուած է զարդարանքներով։

Պեղումների ընթացքում բացի այս բոլոր մեծ յիշատակարաններից բացուել են շատ մանր շինութիւններ էլ, որոնց մի մի յիշելը շատ երկար կը լինի։

V

Ինչպէս ասուեց, բոլոր նիւթերը, որոնք ձեռք են բերուած պեղումներով, պահւում են տեղումը, թանկարանի մէջ։ Այստեղ համեմատաբար կարճ ժամանակում յաջողուել է արդէն Անիի կեանքը ընորոշելու համար հաւաքել շատ բան։ Ապարանքի բոլոր քանդակների մասերը — որ առ այժմ միակ մնացորդներն են աշխարհիկ ընակարանների — մեծ հետաքրքրութիւն են առաջ բերում։ Շատ կարևոր կը լինէր լրացնել այդ մասը կահաւորութեան իրերով. բայց պեղումների հետևանքները այդ մասին շատ ապքատ են, բացի մի փոքրիկ քարէ աթոռից (շատ ընորոշ ԺԲ կամ ԺԳ դարի համար), որը գտնուած է ապքատ թաղամասում, և քանդակաւոր փայտեայ թախտի խեղճուկ մնացորդներից, որ մկրատուած է եղել բամբակեայ վերմակով և գորգով ու դուրս է եկել ապարանքում, չէ գտնուել ոչինչ. մի գերեզմանում գտնուել է գորգի մի ուրիշ կտոր, նկարներով (ԺԳ. դար), անհամեմատ լաւ պահպանուած։

Հանդերձների մասին վերաբերեալ կարևոր գիւտերը եղել են 1908 թուին. գտնուած է մետաքսեայ ամբողջ հագուստ ոսկէ բանուածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբը հիւսած քող, մետաքսեայ ժապաւէնից զօտի և, արդէն մի քանի

անգամ յիշուած, Հոնենց Տիգրանի ազգական փոքրիկ իշխանադստեր մի քանի մանր բաներ։ Թէ այս գործուածքը և թէ նոյն Տիգրանի մի ուրիշ ազգականուհու շապկի մասն զարմացնում են իրանց նուրբը բանուածքով։ Շատ են պղնձէ և արոյրէ (բրոնզ) ապարանջանները, նոյնպէս և օղակները ու մատանիները. վերջիններիս մէջ մէկը արծաթեայ՝ գտնուած է Անիի ուրիշ տեղերում պեղմունքի ժամանակ։

Պատերազմական զէնքի միակ մնացորդն է կաշիէ շապիկը, որ քաշուած է եղել ոսկու և արծաթի թելերով շատ լաւ բանուած զրահի վերայ։ Զէնքերի տարբերներն էլ շատ չեն։ Մի մեծ սուր (ԺԱ.—ԺԲ. դարերի) եռաժանի տէգ՝ հանգոյցներով (նոյն ժամանակի), մի քանի նիզակների ծայրեր, և 750-ից աւելի սլաքների ծայրեր (հինգ, եթէ ոչ աւելի, տեսակ) և վերջապէս երկու քորոց իրանց գլխով։ Պատերազմական տեսակէտից հետաքրքրական է 1910 թուին Աշոտի պարսպի մօտ գտնուածը, որ մի նիզակաւորի կմախք է. նա ոտքից վիրաւորուած է եղել երկաթեայ զէնքով. նրա մահը առաջ է եկել քարէ գնտակից, որը փշրել է գանգի կէսը և մնացել մէջը և ի լրումն այս ամենի՝ գինուորը խաշուել է եռման հեղուկով։ Այս երկրորդ գիւտն է Անիում, որ մարդը չէ թաղուած, իւր կեանքը կարճող, զէնքերի հետ։ 1908 թ. Միջնաբերդում գտնուել է մի շատ երիտասարդ մարդու (գուցէ և կնոջ) գանգ, որի մէջ մնացել է տէգի ծայր,

և ճակատի ոսկրի վերայ ունի խորը կարուածք։ Հաւանական է, որ շատ զէնքեր կը գտնուեն Սմբատի պարսպների տակ, մանաւանդ այն աշտարակների, որոնք վաղուց արդէն փուլ են եկած։

Անիում ամենից շատ գտնուածը՝ անօթների մնացորդներն են, ի հարկէ, մեծ մասամբ ոչ ամբողջ, այլ խեցեաներ։ Անիի թանկարանը կարող է պարծենալ իւր կաւեղէնի հաւաքածոյով։ Կան կաւեղէնների ամեն տեսակները, սովորական կաւեղէններից մինչև շքեղ յաղճապակին։ Հասարակ կաւէ ամանների մէջ առանձին հետաքրքրական են զարդարուն մեծ կարասները, նկարէն գօտիներով, որոնք ներկայացնում են երկրաչափական գծեր կամ կենցաղական տեսարաններ։ 1910 թուին գտնուել է նոյնպիսի կարասի վերնամասը գօտեզարդով և զոյդ խոշոր առիւծների թափովի, կոպիտ պատկերներով, որոնք միմիանց հանդէպ են դալիս. վերջին հանգամանքը սերտ կապ ունի Կովկասի պղնձեայ և արոյրեայ (բրոնզ) կթոսանների հետ։

Զարմանալի են յաղճապակեայ ամանները իրանց թափանցիկ կողերով և ուռուցիկ ու խոր գծած նկարներով, և ճենապակիից ամանները՝ իրանց հարուստ և բազմազան ոսկեզօծ ու բազմերանգ նկարներով, նոյնպէս և ուռուցիկ ու ներս ընկած զարդարանքներով (օրնամենտ). դրանք գտնուած են թագաւորական ապարանքի պեղումներում։ Բեկորներից երևում է, որ ամանների մեծագոյն մասը թափովի է, և աչքի են

ընկնում թափման (որ հինգ տեսակից աւելի է) բարձր կատարելութեամբ, նոյնպէս և գեղարուեստօրէն կատարուած լինելովը ու ներկերի պայծառութեամբ։ Գտնուած ամանների խեցիների թիւը արդէն մի քանի հազարների է հասնում։

Սովորական ամաններից պէտք է առանձին յիշուեն սովորաբար ձուաձև ամանները (ԺԱ.—ԺԴ. դարեր), որ ունեն շատ նեղ շրթունք և հատ պատեր, ծածկուած բազմազան մանր ուռուցիկ զարդարանքներով։ Շատ հաւանական է, որ դրանք արդուզարդի սրուակներ են։ Նրանք պատահում են Առաջաւոր Ասիայի համարեա բոլոր կողմերում, նոյնպէս և Թուրքեստանում։

1910 թուի պեղումները տուին մեծ թուով նոյնպիսի ամաններ, ընդ ամենը 14 ամբողջ և 250 կտորուած։ Այժմ Անիի այդ ամանների ժողովածուն (24 ամբողջ և մօտ 600 բեկորներ) ամենահարուստներից մէկն է և գեղեցիկ նիւթ է մատակարարում նրանց նշանակութիւնը հետազօտելու, նոյնպէս և այդ առարկաների ինքնատիպ շինուածքի ու տեղի համար։ Անկասկած՝ նրանք Անիում են շինուել, թէև հիմք չը կայ այդ առարկաների ծագումն բացառապէս Անիինը համարել։

Թանկարանում մետաղի ամանների մնացորդներ էլ կան. օրինակ, արոյրէ ձուլած սափոր (Ժ.—ԺԴ. դ.) լուացուելու համար, պղնձէ լաւ նկարաքանդակ սափոր (ԺԴ. դ.), արոյրէ (բրոնզ) ձուլածոյ սափէ՝ հետաքրքրական զարդաքանդակ-

ներով (ԺԳ. դ.), պղնձէ սկաւառակ, արծաթէ զաւաթներ, (ԺԱ. դ.) եկն։

Տնային կարասիքի ուրիշ առարկաներից շատ գտնուած են գնդաձև կերպի և մեծութեան կաւէ և երկաթէ ճրագակալներ ու խունկ ծխելու ամաններ, և նոյն իսկ կաւէ «կանթեղ»— միջից կէս արած սափոր (քոնձ) պատրոյդի մի քանի տեղերով։ Շատ գտնուած են շերտաւորուած ու նկարէն ապակու բեկորներ, և մինչև անգամ մի ամբողջ սրուակ։

Եկեղեցական անօթներից կան մի քանի արժէքաւոր իրեր. դրանց մէջ առաջին տեղը բռնում է պղնձեայ մեծ ջահը (ԺԱ. դ.) Գագիկի տաճարից, թագի ձևով, չորսկողմից թռչող աղաւնաձև ճրագակալներով և թագի մէջ տեղում բարդ ձևի մի դամբարով։ Այս ջահը ունէր մօտ 120 գոյնզգոյն ապակեայ դամբարներ, որոնք մեծ մասամբ գտնուած են, բայց բոլորը կոտրուած։ Իւր շինուածքով և ոճով ջահը մի բացառութիւն է։ Կան շատ հետաքրքրական արոյրեայ բուրվառներ և կանթեղներ (Գագիկի տաճարից) աւետարանական պատմութիւնների ձուլածոյ տեսարաններով, և երկու պղնձեայ, կռածոյ շարժական աշտանակներով. ամենից շատ գտնուած են արոյրեայ և պղնձեայ խաչեր (ամբողջ և կոտրուած) հասարակ և աւելի բարդ զարդուեստական, ի միջի այլոց մասունքի երկու երեք պահարաններ։

Արժէ յիշել դեռ մի քանի առարկաներ էլ,

որոնք վերաբերում են քաղաքի առևտրական ու արդիւնաբերական կեանքին։ Այստեղ կան բազմաթիւ քարեայ ծանրաչափեր (гири), հիւսնութեան և անկուածի գնդաձև գործիքներ էլն։ 1907 թուին գտնուեցին և պղնձեայ մանր իրերի ու զարդերի ամբողջ արհեստանոցի մնացորդներ։ Վերջին պեղումները նոյնպէս տուին այս մասին հետաքրքրական նիւթեր։ Գտնուած են պղնձաձուլական երկու արհեստանոցների մնացորդներ, քարէ գնդաձև ձևի բռվերով, որոնց մէջ կան պղնձի հալուածքի հետքեր։ Զուլածոյ ամանների մի քանի արհեստանոցներ, գոյնզգոյն գնդուածների համար մի քանի խոշոր կաղապարներով։ Յայտնուել է ադիւս թափելու գործարան, կիրառութեան պատրաստի և անպատրաստ առարկաներով ու գնդուածով։ Մանաւանդ արժէքաւոր պէտք է համարել քարէ դլանակի մասերը, որով ապուում և դրոշմուում էին կաւէ մեծ կարասների գօտիների նկարազարդերը։ Այս հետաքրքրական է մանաւանդ նրանով, որ այդ գործիքը անկասկած ճշդում է հայկական ինքնուրոյն ամաններ շինելու ձևն ու տեղը, ամանների, որ Անիում մեծ քանակութեամբ են գտնում։

Վերջապէս Անիի երկրագործ դասը թողել է մեզ մի քանի խոփեր, արօրներ, դերանդիներ, և կարելու կամներ։

Ի հարկ է այս չափազանց համառօտ տեսութեան մէջ անհնարին է մի առ մի յիշել բոլոր առարկաները, որոնցից իւրաքանչիւրը ինքնին հե-

տաքրքրական է, դրանցից շատերի մասին ստիպուած ենք լռութեամբ անցնել։

Բոլոր յիշատակուած առարկաները պահպանուում են Թանկարանի առաջին մասում, որ գտեղուած է Մանուչէի մզկիթում։ Երկրորդ բաժանմունքը, որ գտնուում է յատուկ շինութեան մէջ, բովանդակում է ճարտարապետական մասեր, քանդակաւոր քարեր, սրանց մէջ և խաչքարեր, նոյնպէս և արձանագրութիւններ։ Մանաւանդ արձանագրութիւնները Անիում շատ շատ են, գլխաւորապէս՝ հայերէնը, կան արաբերէն ու պարսկերէն էլ։ Այս ուղղութեամբ պեղումները երևան են հանել հարուստ նոր նիւթեր։ Թանկարանում պատուաւոր տեղ են բռնում յունարէն արձանագրութիւնը (պեղ. 1907 և 1908 թուերին), որը յիշուել է, և Աբու-Սայիդի ընդարձակ արձանագրութիւնը, (ԺԴ. դարի սկզբին, գրտնուած 1908 թ.), որը մէջ է բերում, ի միջի այլոց, անեցիների մի քանի հարկերի վերացումն։ Պէտք է յատկապէս յիշել 1910 թուին գտնուած Թանկադին գիւտը, որ վրացերէն մի մեծ արձանագրութիւն է։ Վերաբերելով Անիի ծաղկեալ ժամանակին (1218 թ.), թէև արդէն ոչ մայրաքաղաքի, նա լուսաբանում է քաղկեդոնական մասի բնակիչների յարաբերութիւնը հոգևորականութեան հետ. Անիի քաղկեդոնականութեան մասին ընդհանրապէս գտեալու նոր նիւթ է տալիս և բնորոշում է տեղական իշխանութեան նշանակութիւնը։ Վրաց Եպիփան կաթուղիկոսի այս հրո-

վարտակի տակ կայ տեղական հոգևոր և աշխարհիկ իշխանութիւնների վաւերացումն։ Այս արձանագրութեան գիտական նշանակութիւնը շատ մեծ է և բազմազան*։

Թանկարանի երրորդ բաժանմունքի ամենալաւ զարդը, որ իւր վերայ է դարձնում ներս մտնողի ուշադրութիւնը, (ինչպէս առաջին բաժանմունքում՝ Գագիկի արձանն է), է մեծ սալը, մի հեծեալի և երկու հետևակների ուռուցիկ քանդակապատկերով. զեղարուեստի մի գերազանց արտադրութիւն է այս, լի ուժով, գեղեցկութեամբ, մանաւանդ ձիու քանդակում, և պէտք է վերագրուի Անիի կեանքի հնագոյն շրջանին—Կամսարականների տիրապետութեան ժամանակին։

Բայց Անիի պեղումների գլխաւոր հետևանքը այս բոլոր գիւտերը, մանր իրերը և քարէ յիշատակարանները չեն, այլ այն անվիճելի դրութիւնն է, որ չի կարելի Անիի մասին դատել երկրի երեսին գտնուած փոքրաթիւ բաներով, այլ պէտք է շատ հետազօտել և փորել, որ ներկայացուի Անին այնպէս՝ ինչպէս էր նա։ Այդ դժուարին գործը գլուխ կը հանի Անիի հնախօսական ինստիտուտը, որը հաստատել է կամենում Գիտութիւնների Կայսերական Ճեմարանը։

---

* Տես գրքոյկիս վերջումը Յաւելուածը, ուր հայերէն թարգմանութեամբ մէջ են բերուած Աբու-Սայիդի պարսկերէն, և վրաց Եպիփան կաթուղիկոսի արձանագրութիւնները մի քանի հարկաւոր ծանօթութիւններով։ Հայ Թարգ.

Այն ժամանակ ոչ—մասնագէտների աչքումն էլ կարդարանան խօսքերը, որոնցով ակադեմիկ Ն. Մառը սկսում է իւր զեկուցումն Անիի հնախօսական ինստիտուտի մասին, թէ.

«Կովկասի պարծանքը նրա այն զարդերն ու գանձերն են, որոնցով օժտել է նրան բնութիւնը, նրանցից լաւագոյններին հաւասար Կովկասը կարող է պարծենալ Երկնքի մի կուլտուրական պարգևով էլ—Անիի աւերակներով, հնագիտական պակի իւր այդ խոշոր մարգարիտով»։

ՅԱՒԵԼՈՒՄՆԵՐ

ՎՐԱՑ ԵՊԻՓԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ *

«Աստուածային ձայն ասում է. «Ձրի առաք, ձրի տուէք» (Մատթ, Ժ. 8.). այսինքն, ասում է ձեզ անմահն Աստուած. «այն շնորհի համար, ինչ որ Ինձնից ստացել էք, Ինձ մի բան տուել էք։ Եւ դուք դեռ վաճառում էք մեծ շնորհը, մինչդեռ այն ձեզ վաճառուած չէ։ Եթէ Ես ձրի եմ տուել, ձեզ էլ վայել չէ աղօթքը ժողովրդին վաճառել։ Եւ արդ, Անիի քահանաներ, ձեզ եմ դիմում. (Աստուծոյ) խօսքի համար դայթաղղութիւն մի լինէք. և ունայնի ու անցաւորի համար ոտնահար մի անէք առաքելական պատուէրները։ Օրէնքի կատարեալ խախտումն է և ձեր կողմից, պակի համար հարիւր «դրամ» 1) ստանալը . . . ով կարողութիւն ունի, թող կերակրի. այսպէս և մեռեալների համար. եթէ մի բան հարկաւոր է . . . . աւելի հոգու համար հոգս պէտք կը լինի, այնքան էլ արուի Թիֆլիսի հարիւրից

* Извѣстія Императорской Академіи Наукъ. Н. Я. Марръ. Надпись Епифанія, Католикоса Грузіи. (Изъ раскопокъ въ Ани. 1910 г.) С. П. Бургъ. 1910.

(«դրամ») . . . և կերակրի, իսկ բացի դրանից, նայելով կարողութեանը, քահանաները կարող են վեր առնել (կերակուրից բաժին—порція)։ Ամեն տուրք, որ անգոնելի չէ, թող տրուի քահանաներին։ Այս քաղաքում ապրող վրացիներ, (պէտք է յիշէք) առաջ դուք ինչպէս շատ յարգում էիք նրանց։ Քահանաներից պահանջում է ձեր համար աղօթք և ժամասացութիւն. մի՛ տրանջաք ըստ կարի տուրք տալու նրանց։ Ամենից աւելի, ուրախութեամբ, առանց ստիպման տուէք, որովհետև Տէրը յօժարակամ նուէրն է սիրում։ Սիրեցէք նրանց, որպէս հոգևոր հայրերի, և նրանք էլ թող սիրեն ձեզ որպէս հոգևոր զաւակների։ Եկեղեցում ժամասացութիւնից մի՛ թերանաք ոչ դուք (քահանաներդ) և ոչ դուք (աշխարհականներդ). այլ ամենից աւելի՝ պինդ պահեցէք աստուածային սէրը առ միմեանս, և այսպիսով հաստուցէք Աստուծոյ պատուէրներից ամենացանկալին։ Այս գրեցի ես, Եպիփան կաթուղիկոս, իմ ձեռով, երբ օրհնում էի Անիի եկեղեցիները։

Թիֆլիսի այն հարիւր «դրամը» [օրինակատարութեան համար] թող մնան, բայց վճարելով մի «դանդ»՝ երեքի տեղ. ինչ վերաբերում է կովի կաշուն, մինչև այժմ դուք (քահանաներ) ամբողջովին էիք վեր առնում. այսուհետև դուք (աշխարհականներ) տուէք նրանց մի մի շերտ, որ նրանք (ձեր համար) պաշտօն կատարեն։ Եւ մենք ինչու փոխենք եկեղեցական կանոնները։ Ով իմ այս կարգադրութիւնը փոխի, ոչ . . . Աստուծոյ

և Նրա սրբերի հրամանը։ Քրօնիկա 438».

Այս արձանագրութիւնը վերջանում է հայերէն հետևեալ վաւերացումով։

«Թվ. ՈԿԷ, Ես տէր Գրիգոր իր[իցապետ ե-պի]ս[կո]պոս. Ես Վահրամ ամիրայ քաղաքիս վկայենք, որ կաթողիկոսին հրամանք եղ»

ՈԿԷ. հայոց թուականը համապատասխան է Քրիստի 1218 թուականին։

ԱԲՈՒ-ՍԱՒԻԴԻ ՊԱՐՍԿԵՐԷՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

(ԵԱՌԼԻԿ* 2)

1. «Աստուած գիտէ իւր ծառաների (գաղտնիքը)։

2. «Աբու—Սաիդ Բահատուր-խան։

3. «Եառլիկ (Հրովարտակ)։ Ներկայումս երկրի երեսի թագաւորի մայրաքաղաքից.

4. «աշխարհի սուլթանի՝ որ փառաւորուած է երկրաւոր աշխարհից և հաւատից, և որի թագաւորութիւնը (Աստուած) յաւիտենական անի,

5. «երբ արևելքից արևմուտք աշխարհի բնակիչները գանուում են նրա գթութեան և արդարադատութեան հովանու տակ, թող Բարձրեալ Աստուած նրա կարգադրութիւններն ու հրամանները աւելի ևս կարուկ անի,—

---

* Анийская серія № 5 Անւոյ շարք. В. Бартольдъ. Персидская надоись на стѣнѣ Анийской мечети Мануче. С. П. Бургъ. 1911.

6. «կարգադրութիւնը այս է։ Որովհետև երկրի երեսը հպատակ է նրա հրամանին և դիւանի կարգադրութիւնը նրա գրչի շարժումից կախու�ունի, թող ոչ ոք չհամարձակի պակասացնել կամ աւելացնել (մի բան).

7. «թող բացի թամղայից 3) և արդարացի հարկերից ուրիշ ոչինչ չառնեն, և ոչ մի մարդուց կալանի 4) նեմերի 5) թարխի 6) և ուրիշների (հարկերի) պատրուակով ոչինչ չը պահանջեն.

8. «ինչպէս սրանից առաջ Անի քաղաքում և Վրաստանի այլ գաւառներում ապօրինաբար սահմանուած կալան և նեմերի (հարկերի) և թարխի բռնի հարկապահանջութեան պատճառով,

9. «բռնութիւն էին առաջ բերում և գործ դնում։ (Երկիրը) անապատ դարձաւ, հասարակ ժողովուրդը ցիր ու ցան եղաւ, քաղաքի և գաւառի աւագները կալան և դռնագիր 7, հարկերի պատճառով։

10. «անշարժ կայքերն ու իրանց ընտանիքը թողին ու հեռացան։ Գրեցին կարգադրութիւնը (այսպիսի բովանդակութեամբ)։ Ամենաբարձրեալն Աստուած Բարձրագոյն հովանին (այսինքն Բարձրագոյն պաշտպանութիւնը) (հպատակների) գլխից (չհեռացնի) . . .»

Վ. Բարտոլդ իւր յիշեալ գրքոյկի մէջ ասում է. Հրովարտակի վերջը, ուր, հաւանօրէն, ցոյց արուած կը լինէր նրա հրատարակուելու իսկական

թուականը, արձանագրութեան մէջ բաց է թողուած։ Այդ պատճառով էլ կարելի է դրա մերձաւոր թիւը որոշել որպէս վերջին կէտ ընդունելով Աբու—Սա՛իդի մահուան օրը, այն է 1335 թ. նոյեմբերի 30-ը։ Խանբկովի կարծիքով Աբու-Սա՛իդը բահատուր տիտղոսը ստացաւ 1319 թուին մայիս յունիս ամիսներում։ Ուրեմն հրովարտակը հրատարակուած է 1319—1335 թուերին, հաւանօրէն, այս միջոցի աւելի երկրորդ կիսին։

Այս հրովարտակից երևում է, որ բնակիչները քայքայուած լինելով չափազանց հարկերից և ապօրէն հարկահանութիւններից լքանում էին իրանց ստացուածքն ու հեռանում։

Ընդհանուր կարծիք է, որ Անին կործանուեց 1319 թուին երկրաշարժից. բայց փաստերը գալիս են ապացուցանելու, որ Անին յանկարծ չէ կործանուել, այլ բարեկեցութեան նուազելով հետզհետէ աւերակ է դարձել։

Յաճախ պնդում են, ասում է Վ. Բարտոլդ, որ մոնգոլական տիրապետութիւնը Առաջաւոր—Ասիայի համար աւելի կորստաբեր է եղել քան մեծ զաղթականութիւնը Եւրոպայի համար։ Սակայն չենք տեսնում որ մոնգոլական արշաւանքը Առաջաւոր—Ասիայում այնպիսի մեծ և տեսական աւերմունք հասցրած լինէր։ Կիսավայրենի մոնգոլների արշաւանքը սկզբում կարող էր կորստաբեր ազդեցութիւն ունենալ իրանց նուաճած, բայց քաղաքակրթութեամբ իրանցից բարձր ազգերի կուլտուրայի վերայ. բայց մոնգոլները շուտով

իւրացնում էին տեղական քաղաքակրթութիւնը։ Այս բանը մենք տեսնում ենք Աբու-Սա'իդի հրովարտակից։ Ժողովուրդը կոչւում էր ռայեա, պետը թէ գիւղում և թէ քաղաքում՝—ռայս այժմ ռէս. իսկ աւագները, որ մի քանի հոգի էին լինում,—քէդխուդա (եր. 42—43)։ Այս կոչումները այժմ էլ կիրառութեան մէջ են։

Մոնգոլների ակրապետութեան ժամանակ Մեծ-Հայքի հարկը 39 թոման (=292500 ռ) էր։ Այդ ժամանակ Մեծ Հայքի մայրաքաղաքը Ալխաթն էր, Վանայ ծովի ափին. (եր. 24)։ Անիի Թամղան հաւանօրէն աւելի քիչ էր։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1. Դրամագէտները միայն կարող են մեզ ասել, որ «դրամ»-ը յայտնի ժամանակից սկսած (ԺԲ. դ.) պղնձեայ էր. իսկ առաջ՝ արծաթեայ (Y. Langlois, Essai de classification des suites monétaires de la Gèorgie, Փարիզ 1860. եր. 49)։ Ինչ յարաբերութիւն կար Վրաստանում «դրամ»-ի և «դանգ»-ի մէջ, որ յիշւում է ստորև, յայտնի է. բայց նրանց իսկական արժէքը լիովին բացատրուածչէ։ Օրբելեանի-ի բառարանում ասուած է «դրամը կշռում է վեց՝ դանգ» «կամ», Ֆ. Ժօրդանի-ի ձեռքին եղած ցուցակով՝ «գարու տասն երկու հատի քաշ»։ Այս բացատրութիւնը ի նկատի ունենալով Օրբելեանին, Ֆ. Ժօրդանիի ԺԱ. դարի յիշատակարանի ծանօթութեանը աւելացնում է. «հինգ կրկնակ (արծաթ) դանգը մի արաղ է», այսպէս նա կարդացել է Աղբուղայի օրէնքի, 1670 թ. ձեռագիր ցուցակի յաւելուածի մէջ։ Մխիթար Գօշի դատաստանագրքի համեմատ (ԺԲ.

դ) վեց «դանգ»-ը մի «դահեկան» է, մի քանի ցուցակների համեմատ՝ ոսկի. իսկ դանգի քաշն է 12 գարեհատ. (հրատ. Վահան վարդապետ Բաստամեանցի, Վաղարշապատ 1880 թ. եր. 372—379)։ Ինչպէս հաղորդում է Ի. Ա. Զաւալովը, որ հին Վրաստանի տնտեսական պատմութեան մասին ուսումնասիրութիւններ ունի, «դանգը» ԺԳ. դարում հաւասար էր ռուսական դենգի=7,05 կոպ։ Ն. Մառ. Надпись Епифанія, Католикоса Грузін.

2. Եաղիկ էին կոչում Մոնգոլ խաների մանաւանդ այն հրովարտակները, որոնք մածուցուած էին լինում քաղաքների, աւանների և գիւղերի մուտքերի մօտ ընկած գերաններին և կամ հասարակական հաստատութիւնների որմին փորագրուած, և թուում էին տեղերի հարկերը, յայտնելով պահանջելիքի քանակութիւնը։

3. Թամղա—քաղաքներից առնւող առևտրի և արդիւնագործութեան հարկ։ Թամղա հաւաքող ատենադարները կոչւում էին Թամղաչի։ Այս մաքով «Թամղա» համապատասխանում է պարսկական «Բաջ» տերմինին, որը իսլամութեան դեռ առաջին դարերում գործ էին ածում արաբ գրողները, և բառարաններում երբեմն նրա հետ նոյնացնում էին «Թամղա» բառը։ Բաջ բառը գործ է ածւում մեր արձանագրութեան մէջ էլ. ինչպէս երևում է հայ արձանագրութիւններից այդ բառը գործ էին ածում տեղական ընակիչներն էլ։ (Персидская надпись. В. Бартольдъ. 1911 թ. С. П. Бургъ. եր. 33—35)։—Բաջ-ը հայ գրականութեան և արձանագրութիւնների մէջ «բաժ» է փոխուել։

4. Կալաց—նստակեաց ժողովուրդների հողամասերի հարկ, իսկ կոպչուր արօտատեղիների և արածող անասունների հարկ, որ առնւում էր վրանաբնակ խաշնարած

ժողովուրդներից։ Խաշինք ունեցող նստակեացներից էլ էր առնուում կալան, եթէ նրանք առանձին խաշինք և արօտատեղիներ էին ունենում, (նոյն. եր. 30—33)։

5. Նեմերի—արտակարգ տուրք յատկապէս զօրքերի պահպանութեան համար մանաւանդ պատերազմի դէպքերում։ Նեմերի տուրքից ազատ չէին մինչև անգամ արքայական տան անդամներն էլ։ (Նոյն եր. 38—40)։

6. Թարխ—կոչւում էր հոգևոր հաստատութիւններին յատկացուած տուրքն ու նուէրը. նոյն անունն էր կրում պետական ամբարին հասցրած ցորեանը, գանձարան մուծուած դրամը, որ նեղ ժամանակին յետ էր տրւում ժողովրդին փոխարինաբար։ (Նոյն եր. 40—42).

7. Գունագիր—այդ անուամբ հաւանօրէն կոչւում էր այն հարկը, որ քաղաքի դռների մօտ յօգուտ քաղաքի առնուում էր ներս մուծւող մթերքներից. այդ տեղական տուրք էր, անկախ պետական հարկերից։ (Նոյն եր. 42)։

Անիի տուրքերի շարքում Անիի գլխաւոր դռների մօտ հայերէն արձանագրութեան մէջ յիշւում է նաև խասինջու (տես սոյն գիրք եր. 27)։

Արքայական տանը պատկանող սեպհական կալուածներն ու նրանց վերայ ապրող մարդիկ կոչւում էին «ինջու»,—արաբերէն խաս մակդիրի յաւելմամբ =խաս—ինջու։ Ճշդիւ որոշուած չէ տէրերի ու կալուածքի վերայ ապրողների իրաւաբանական յարաբերութիւնը. (նոյն եր. 27—30)։

БИБЛИО-ТЕКА

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եր.	տ.	վեր.	սխալ	ուղիղ
15.		6	միասին	մասին
19.		26	եկրների	Եկրների
»		26 — 27	քա-քային	քա-ղաքային
20.		20	հոգոր	հոգս
»		22	ենթակ	ենթաՀկ
21.		4	ժամանանակ	ժամանակ
»		17	դինանարի	դինարի
22.		7	Փաղունին	Փաղունին
»		16	սութան	սուլթան
23.		3	բաձր	բարձր
»		4	եղբայրները	երբայրները.
»		25	կայնաբաբուկ	կայնաբաղուկ
24.		6	նաղուկների	նաբաղուկների
»		18	ամիջ	անմիջ
25.		5	յատութիւն	յատկութիւն
»		7	կոցած	կորցրած
25.		13	քաղաքկան	քաղաքական
26.		10	գործնէութեան	գործանէութեան
31.		26	Աբուղամբենց	Արուղամբենց